

ՄԵԾ Է ԿՍՍԱՀՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԱԶԱՏ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ

ԿԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Հանրապետության նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ, վերահաստատելով Լիբանանի տնտեսական և դրամական ապագային գծով իր լուսատեսությունը, դիտել տուաւ, որ լիբանանցիք պէտք է օգտուին ներկայացող առիթներէն՝ կապուրդելու համար տնտեսութիւնը, որ կարիքը ունի պետական պատասխանատունէրու, քաղաքագէտներու և տնտեսական ու դրամական հեղինակութիւններու գործակցութեան:

Լիբանանի Դրամատուններու Միութեան նոր վարչութիւնը ժողովք Թարապէյի գլխաւորութեամբ երէկ այցելեց նախագահ Լահուտի, որ հանդիպումին ընթացքին նաեւ դրամատիքով խօսեցաւ ներքին դէպքերուն դիմացած եւ տնտեսութեան նեցուկ կանգնած այս բնագաւառին մասին:

Ան վստահեցուց, թէ պետական բոլոր պատասխանատուները համաձայն են տնտեսական վիճակի դարմանումին շուրջ եւ պետական ու սեփական մարպերը կոչուած են մասնակցելու այս հաւաքական ճիգին:

Մեծ է վստահութիւնը Լիբանանի եւ անոր պատ տնտեսութեան հանդէպ եւ անհրաժեշտ է ամրապնդել Կայն, ըսաւ նախագահ Լահուտ, ընդգծելով, որ տնտեսական եւ դրամական պայմանները դարմանելու ճիգերը հետու պետք է մնան քաղաքական նեղ հաշիւներէն:

Միջապայի պարզացումներուն դիմաց Լիբանանի ներքին կայունութիւնը կը քաջալերէ ներդրումները, որոնք գործի առիթ կը ստեղծեն Լիբանանի երիտասարդութեան, ըսաւ ան, վերահաստատելով, որ տնտեսական վիճակի բարելաւումը հաւաքական պատասխանատուութիւն է եւ անհրաժեշտ է վերջ դնել պետական գումարներու մսխումին:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց բանակի հրամանատար ԿՕՐ. Միշէլ Սլէյմանի, նախկին նախարար Յուսէյն Պուրոսի, նախկին երեսփոխան Նուհատ Սուայտի եւ Պալպէքի փառատօներու կազմակերպիչ յանձնախումբի այցելութիւնները:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԵԼԵԿՏՐՈԿԱՆՈՒԹԵԱՆ ընկերութիւնը երէկ յայտարարեց, որ շրջաններուն ելեկտրական հոսանքի հալթալթումը բարելաւում արձանագրած է եւ այժմ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Վարչական Պէյրութ՝ օրական 24 ժամ.
Լեռնալիբանան՝ օրական 21էն 22 ժամ.
Հարաւ՝ օրական 20 ժամ.
Հարաւային եւ հիւսիսային Պէքաս, Մար-ժայլուն, Ջահլէ եւ Այնճար՝ օրական 22 ժամ.
Հիւսիսային Լիբանան՝ օրական 22էն 23 ժամ:

● ԴՐԱՄԱԿԱՆ հարցերու ընդհանուր դատախազ իսախ Իսհակ երէկ չարունակեց հարցաքննել ելեկտրականութեան ընկերութեան բարձրաստիճան պաշտօնատարներ, ընկերութեան գանձումներուն մէջ թերացուելու եւ պետական գումարներու մսխումի հարցով:

● ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ շրջաններուն վրայ իսրայելեան յարձակումները դատապարտող ցոյցեր կատարուեցան երէկ՝ Իւշիտի, Պաս, Այն Հըլուէ եւ Պըրժ Շըմալի գնդակայաններուն մէջ: Պաղեստինցի ժողովուրդին պօրակցութեան հաւաքներ կատարուեցան նաեւ տարբեր շրջաններու մէջ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ	ՎԱՆԱՅ ԶԱՅՆ
Այսօր, կէսօրէ ետք ժամը 5:00ին, կրնաք լսել Հայաստանի դեսպան՝	
ԱՐՄԱՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆԻ	
մամլոյ ասուլիսը, Լիբանանէն իր մեկնումին առիթով:	

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
(Հրատարակուած Մեքնի Գործադիր Գրասենեակին կողմէ)
Հիմնուելով Գործադիր Գրասենեակի թիւ 264 / 2001ի թուականի 13 / 3 / 2001 գործողութեան վրայ, տեղի ունեցած՝ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ՊԱՀԱՆ-ՋՈՂԻ «Համագայի» Մշակութային Միութեան ընդդէմ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԵՆՔԱԿԱՅ՝ ԿԱՐԱՊԵՏ ԶԱՐԳՈՅՆԻ Ժառանգորդներու, միւլ՝ 493,589 ամերիկեան տոլարի արժողութեամբ մուրհակներու գործադրութիւնը:
Վերոյիշեալ գրասենեակին նախագահութիւնը որոշեց 2 / 10 / 2001 թուականին մամուլով կոչմագիր ուղարկել անչափահաս Ժառանգորդներէն մէկուն՝ Սեբաժ Արա Կարապետ Հարպոյ-Խանին, որպէսզի այն անձը՝ որ զինք կը ներկայացնէ օրինականօրէն մերկայանայ ստանձնելու կոչմագիրի թուրքերը եւ ազդարարագիրը մեր գրասենեակէն: Այլապէս մամուլով յայտարարութեան երկու ամսուան ժամանակամիջոցը աւարտելէն ետք կը նշանակուի գայն մերկայացնող յատուկ անձ մը, որ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻ Խանգամանք կը ստանայ ըստ Դատաւարական Քաղաքային Կանոնի 15րդ յօդուածի բարեփոխուած թիւ 144 / 999 օրէնքին:
Գործադիր Գրասենեակի Դիւանապետ ՄՐԱՏ ԷԼ ԶԼՈՒ

ՀԸՁՊԱԼԼԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՑԵԼԵՑ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Մարոնիներու Նասրալլա Մֆէյր պատրիարքը երէկ ընդունեց Հըզպալլայէն բարձրաստիճան պատուիրակութիւն մը, որուն մաս կազմեցին երեսփոխան Մոհամէտ Թաատ եւ քաղաքական գրասենեակի անդամներ Նաուաֆ Մուսաուի եւ Ղալէպ Ապու Ջէյ-Նապ: Ներկայ էր Մարոնիներու Լիկայի նախագահ Հարէս Շըհապ:

Թաատ ըսաւ, որ Մֆէյր Հանդիպումին վերահաստատեց իր գօրակցութիւնը դիմագրութեան, որ կ'ազատագրէ բռնադրուեալ հողերը:

Ազատութիւններու կաշկանդումին մասին հարցումին մը պատասխանելով, Թաատ ըսաւ, որ պետական պատասխանատուները հաստատած են, թէ սխալ մը գործուած է եւ բոլոր կողմերը կ'ուզեն արմատական միջոցառումներով կանխարգիւլ անոր կրկնութիւնը:

Կամայականութիւնը միայն թափէր գործադրութեան մէջ չէ, այլ երկրի քաղաքական ղեկավարութեան բոլոր քայլերուն մէջ, ըսաւ ան, հաստատելով, որ բոլոր լիբանանցիները կ'ուզեն, որ գործադրուի թափէր:

Թաատ յայտնեց, որ բարեկամական միջոցորտի մէջ ընթացած Հանդիպումին քննարկուած են երկրին ընդհանուր հարցերն ու ազատագրուած շրջաններուն մէջ քրիստոնեայ - իսլամ յարաբերութիւնները:

ՆԱԽԱՐԱՐ ՄԸՐ ԱՅՑԵԼԵՑ ՍՖԵՅՐԻ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ այցելեց մարոնիներու Նասրալլա Մֆէյր պատրիարքին, ապա յայտարարեց, որ Հանդիպումը շատ լաւ ընթացած է եւ քննարկուած են երկրին ընդհանուր հարցերը:

Ազատութիւններու գծով Մֆէյրի մտավախութիւններուն մասին հարցումին մը պատասխանելով, Մըր ընդգծեց, որ Այն ժողով համալսարանի դէպքը վարչական սխալ մըն է եւ առաջին անգամ ազատութիւններու գծով սխալ կը պատահի ներքին գործոց նախարարութեան կողմէ:

Խորհրդարանի լիագումարին ընթացքին երեսփոխան Պաշտմ Սապրէի քննադատութիւններուն մասին, Մըր ըսաւ, որ միշտեւ երկուշաբթի Հանրապետութեան նախագահին եւ վարչապետին միջեւ միջոցորտը շատ լաւ էր, «ուստի կը մաղթեմ, որ այդ խօսքերը յետին նպատակներ չունենան»:

ՀԱՄՄՈՒՏ - ՇԱՐԷՀ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ հեռաձայնեց սուրիացի իր պաշտօնակիցին՝ Յարուֆ Շարէհի եւ անոր հետ քննարկեց Պաղեստինի մէջ իսրայելեան մագցցումն ու սիրոնական ահաբեկչութիւնը, հաղորդեց սուրիական «Ամա» լրատու գործակալութիւնը:

Համմուտ երէկ ստացաւ նաեւ Քանաթայի արտաքին գործոց նախարար Ճոն Մանիէին նամակ մը, որ հաստատեց, թէ Լիբանան կարեւոր դեր ունի Միջին Արեւելքի եւ ահաբեկչութեան դէմ արշաւին մէջ եւ Քանաթա կ'ուզէ ծանօթանալ այս հարցերուն գծով լիբանանեան կառավարութեան տեսակէտներուն:

Մանի ղրդուտեց Լիբանանի տոկունութիւնն ու մարտահրաշէրները յաղթահարելու վճռակամութիւնն ու Լիբանանի հետ կապերը ամրապնդելու փափաքը:

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ - ԻՍԼԱՄ...

Շարունակուած Ա. Էջէն
Ապա, եզրափակելով թեան ու պետական բարձրաստիճան պատասխանատուներու հետ ունեցած Հանդիպումներուն:

ՍՈՒՐԵ ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵՍԵՐ ՏԻԿԱՆՑ ՍԻՈՒԹԻՒՆ
Ուրբաթ, 7 Դեկտեմբեր 2001. Ժամը 10:30ին ՍԻՐՏ ՅԻՍՈՒՄԻ ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳ
Պատարագէն ետք ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Նիւթ՝ «ԵՈԿԱՆ ԵՒ ԻՐ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»
Բանախօս՝ ՕՐԴ. ՄԱՐԱԼ ՕԶԱՆՆԵՍԵԱՆ
ՀՐԱԷՐ

Հ. Հ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԵ - ԱՅՆԵԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏԱՆ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 8 Դեկտեմբեր 2001, երեկոյեան ժամը 7:30ին:
ԾԱՆՕԹ.- Ձեռնարկին պիտի յաջորդէ Հ. Հ. Դաշնակցութեան 111ամեակին առիթով, ժողովրդային խրախճանք, ժամը 9:00էն սկսեալ, ձաշարան «Արեւ»ի մէջ:
ԿՈՒԶՈՒՆ ● Ինքնաշարժ ունեցող մեքենայի օրհորներ ըմպելիք մերկայացընելու սուկորմարթթներու, միմիմարթթներու, ձաշարաններու եւ պանդոկներու, Պէյրութի եւ Լիբանանի այլ շրջաններու մէջ: Հեռաձայնել 03 - 295103 թիւին:

ԽՈՐԷՐԴԱՐԱՆԸ ԳՈՒՍԱՐԵՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն
րաւտիմանը:
«Բաւարար չէ դատաւարտել պաղեստինցի ժողովուրդին դէմ գործուած ճիգները», ըսաւ ան:

Երեսփոխան Անուար Խալիլ պահանջեց, որ կատարութիւնը Հարաւի խորհուրդին պիտի չաւելցնէ, հասնելով անցեալ տարիներու գումարներուն, որովհետեւ պատարուած շրջաններուն նկատմամբ այս կեցուածքը ամօթալի է:

Երեսփոխան Նալիլ Մուաուատ քննադատեց ընդհանուր ապատութիւններուն վրայ ճշումները եւ խորհրդարանին պահանջեց դատաւարտել պաղեստինցիներուն դէմ իսրայելեան ռմիրները:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

Երեսփոխան Սալէի խէյր ընդգծեց շրջաններու հաւասարակշռուած բարգաւաճումի անհրաժեշտութիւնը, ան որչունեց ամերիկեան ճշումներուն դիմաց դիմադրութիւնը օրինական իրաւունք նկատելու կառչած պաշտօնակալներու:

ՀԱՄԱԶԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԶՐԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԵԱՆ
ՀՐԱԷՐՈՎ
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ
ԹԱԹԱ
ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԸ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ
ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՏԱՆԴԵՍ
Շաբաթ, 5 Յունուար 2002, երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ, Regency Palace-ի «Jade» սրահին մէջ, Ատմա:
Սակ մէկ անձի՝ 60 տոլար

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ
UNESCOի համդիսարահին մէջ Կիրակի, 6 Յունուար 2002, երեկոյեան ժամը 7:30ին:
Սակ մէկ անձի՝ 10,000 լ.ո. 20,000 լ.ո. 30,000 լ.ո.
SPONSORED BY
Schwarzkopf PROFESSIONAL

ՄԻՆԶԵՒ ՏԱՐԵՎԵՐԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ'ԱԿՆԿԱԼԷ ՈՒՆԵՆԱԼ 100 ՀԱԶԱՐ ԶԲՕՍԱՇՐՋԻԿ

2001ի առաջին ինը ամիսներուն ընթացքին Հայաստան այցելած է շուրջ 91 հազար զբոսաշրջիկ: Ըստ Հայաստանի առեւտուրի եւ արդիւնաբերութեան փոխ նախարար Արմէն Գէորգեանի, կը նախատեսուի, որ մինչեւ տարեվերջ զբոսաշրջիկներուն թիւը բարձրանայ 100 հազարի: Զբոսաշրջիկներու այս աննախընթաց թիւը կը բացատրուի Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի առիթով տեղի ունեցած տօնակատարութիւններով:

Նշենք, որ 2000ի ընթացքին Հայաստան այցելած են 45 հազար զբոսաշրջիկներ, որոնք երկրին ապահոված են 45 միլիոն տոլարի օտար դրամանիշ:

Սակայն պէտք է նշել, որ 11 Սեպտեմբերէն ետք միջազգային զբոսաշրջութեան հետ որոշ նահանջ արձանագրած է նաեւ Հայաստանեան զբոսաշրջութիւնը: Զբոսաշրջային մեծ խումբեր ընչա՞ծ են իրենց այցելութիւնը: Տեղաւոր այս երեւոյթին, տարուան ընթացքին Հայաստան յաճախ է պահել զբոսաշրջութեան միջազգային չափանիշները: Ասոր նպատակն է նորակառուց պանդոկները, փոխադրամիջոցներու բարելաւումը եւ զբոսաշրջային այլ յարմարութիւններու ստեղծումը:

Հայաստանի մէջ տարուան ընթացքին նաեւ հաստատուած է զբոսաշրջական տեղեկատուական առաջին կեդրոնը՝ «Հայաստան»ը, որ այցելուներուն անվճար կերպով կը տրամադրէ տեսարժան վայրերու, մշակութային կեանքի, պանդոկներու, ճաշարաններու, վաճառատոներու եւ զբոսաշրջիկը հետաքրքրող այլ նիւթերու մասին տեղեկութիւններ:

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԸ»

Վերջերս հրատարակուած է «Հայ եկեղեցու սրբալոյս միւռոնը» վերնագիրը կրող գիրքը, որուն հեղինակներն են կենսաբանական գիտութիւններու դոկտոր, փրոֆ. Նազիկ Ունջեան եւ անոր դուստրը՝ բժիշկ-սրտաբան Սիրանուշ Գալստեան: Գիրքը նուիրւած է Հայ եկեղեցւոյ միւռոնի ծագման, բաղադրութեան, պատրաստութեան, օրհնութեան ծիսակարգի եւ անոր գործածութեան հարցերու լուսաբանման:

Ներկայիս Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին մէջ կը պահուին միւռոնի նիւթական եւ հողեւոր կողմերուն նուիրուած բազմաթիւ մատենագիր աղբիւրներ, որոնցմէ ամէնէն կարեւորներն են միւռոնի օրհնութեան կանոններուն նուիրուած Մաշտոցները, եւ պատրաստութեան համար անհրաժեշտ բոյսերու եւ նիւթերու ցուցակները:

Միւռոնի պատրաստութեան վերաբերող գրականութեան մանրակրկիտ ուսումնասիրութիւնը հեղինակներուն բերած է այն եզրակացութեան, որ միւռոնի բոյսերու եւ նիւթերու ցուցակներու առաջմ յայտնի բազմաթիւ տարբերակները, կրելով բազմալեզու ժողովրդական անուններ, կը կարօտին բուսաբանական վերծանութեան եւ արդիական վերահաստատում:

Գիրքին հեղինակները առաջին անգամ ըլլալով ձեռնամուխ եղած են միւռոնի բաղադրութեան մէջ մտնող բոյսերու ժողովրդական անուններու վերծանման եւ զանոնք արտայայտած են բուսաբանական անուանակարգի միջնազգային օրէնքներուն համապատասխան լատիներէն եւ հայ ժողովուրդին աւելի մօտ ու հարազատ հայերէն գիտական համարժեքներով:

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ»

ՄԱՆԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

«Հայֆիլմ»ը իր աւարտին հասցուցած է Հայրենի բեմագրիչ Արման Մանարեանի «Սասունցի Դավիթ» մանկական շարժապատկերի միայն առաջին մասին նկարահանումները:

«Հայֆիլմ»ի տնօրէն Գէորգ Գէորգեանի համաձայն, շարժապատկերը բաղկացած պիտի ըլլայ ինը մասէ, ընդամենը մէկուկէս ժամ տեւողութեամբ: Թէեւ նախատեսուած է ամէն տարի նկարահանել մէկ մաս, սակայն այս ընթացքով ժապաւէնին նկարահանումը իր լրումին պիտի հասնի բաւական ուշ: «Այս մտահոգութեամբ ալ դիմում կատարուած է Ազգային ժողովի նախագահին, որ լրացուցիչ գումարներ տրամադրէ տարին գոնէ երկու մաս ամբողջացնելու համար», աւելցուցած է Գ. Գէորգեան:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ե. ԿՈՂԲԱՑԻԻ «ԵՂՇ

ԱՂԱՆԴՈՅ»ԻՆ ՔՆՆԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու արեւմտեան թեմի ազգային առաջնորդարանի հովանաւորութեամբ, 1700ամեակի առիթով կատարուած հրատարակութիւններու ծիրին մէջ վերջերս Քալիֆորնիոյ մէջ լոյս տեսած է բանասիրական գիտութիւններու փրոֆ. Լեւոն խաչերեանի քննական ուսումնասիրութիւնը՝ նուիրւած Ե. դարու իմաստասէր, մատենագիր Եզնիկ կողբացիի «Եղծ Աղանդոց»ին:

«Եղծ Աղանդոց»ը կ'արտացոլէ գաղափարական աշխարհայեացքային այն պայթիւքը, որ մղեց ժամանակի առաջնորդ մտաւորականութիւնը հերձուածողական եւ աղանդաւորական հոսանքներու դէմ:

Փրոֆ. Լեւոն խաչերեանի քննական ուսումնասիրութիւնը կը բաղկանայ 274 էջերէ, ուր հեղինակը կը քննարկէ, կը վերլուծէ եւ կ'արժեւորէ Ե. կողբացիի «Եղծ Աղանդոց»ը: Գիրքին նախաբանը գրած է Մուշեղ եպս. Մարտիրոսեան:

ՄԱՐՈՆԻ ԶԱՄԱՆԱՆԵՐՈՒ ԸԱՍԱՆՍԲՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՍԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՌԶԱԿՄԱՆ 1700ԱՄԵԱԿԻ ԶԵՌՆԱՐԿ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի առիթով Հայաստանի թե Սփիւռքի մէջ տեղի ունեցան բազմաթիւ տօնակատարութիւններ, որոնց շարքին առանձնապատու տեղ գրաւեցին այն ձեռնարկները, որոնք կը միտէին տեղական ընկերութիւնները ծանօթացնել հայ եկեղեցւոյ պատմութեան, աւանդութիւններուն եւ անցած ուղիին:

Այս նպատակը կը հետապնդէր նաեւ Շաբաթ, 1 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 5:00ին, Պուրն Համուտի եւ Սին Էլ Ֆիլի մարոնի քահանաներու, քոյրերու եւ կղերականներու համախմբումին 1700ամեակի առիթով կազմակերպած դասախօսական ձեռնարկը, որ տեղի ունեցաւ Տորայի Սայտաթ Սալամ դպրոցի սրահին մէջ:

Օրուան դասախօսներն էին՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան Փառնգ վրդ. Վարդանեան, իսկ հայ կաթողիկէ եկեղեցիէն Գեորգ վրդ. Եղիայեան: Ձեռնարկին բացումը կատարուեցաւ «Տերունական աղօթք»ի հայերէն երգեցողութեամբ, ապա կազմակերպիչ հայր Էլի Քամպար Երկապացունք ձեռնարկին նպատակը եւ յայտնեց, որ թեւեւ հայերը երկար ժամանակէ ի վեր կ'ապրին այս երկրին մէջ, այսուհանդերձ տակաւին բոլոր լիբանցիները, եւ մանաւանդ քրիստոնէաները բաւարար տեղեկութիւն չունին հայ ժողովուրդի 1700 տարուան քրիստոնէական վկայութեան մասին:

Այնուհետեւ ան Երկապացունք օրուան դասախօսները: Խօսք առաւ հայր Գեորգ վրդ. Եղիայեան, որուն Երկապացունքն էր «Հայ եկեղեցւոյ ոգեկանութիւնը»:

Ան Հայ եկեղեցւոյ 1700ամեայ պատմութեան ընդմէջէն Երկապացունք հայ ժողովուրդի հոգեւոր արժեքները եւ ըսաւ, որ այս հոգեւոր արժեքներուն շնորհիւ էր, որ հայ ժողովուրդը, հակառակ իր ապրած արհաւիրքներուն եւ տագնապներուն, միշտ յաջողած է վերագրաբնիլ: Ան նաեւ ըսաւ, որ հայ ժողովուրդը միշտ հաւատարիմ մնացած է քրիստոնէական արժեքներուն, եւ անոնց ազդեցութեան տակ կերտած է իր ինքնուրոյն ոգեկանութիւնը, որուն շնորհիւ հայ եկեղեցին, ժողովուրդը եւ հայկական պետականութիւնը կը թելադրեն ճոր ժամանակաշրջան՝ իրենց քրիստոնէական կեանքին մէջ: Ապա Սագո Սարգիսեան մեկնաբանեց «Նոր ծաղիկ» շարականը:

Ձեռնարկին երկրորդ դասախօսն էր Փառնգ վրդ. Վարդանեան, որ Երկապացունք «Հայ եկեղեցին. հիմնադրութիւն եւ առաքելութիւն» նիւթը:

Փառնգ վրդ. Վարդանեան նախ հակիրճ կերպով անդրադարձաւ նախքան 301 թուականը քրիստոնէութեան Հայաստան թափանցման եւ Հայաստանի մէջ արմատներ նետելու երեւոյթին: Այնուհետեւ ան խօսեցաւ այդ նոյն ժամանակաշրջանին Հայաստանի եւ հայ ժողովուրդին ապրած քաղաքական պայմաններուն մասին:

Բանախօսը կեդրոնացաւ Գրիգոր Լուսաւորիչի կատարած քարոզչութեան եւ կեանքին վրայ: Աւարտին առիթ տրուեցաւ հարցումներու:

Այս ձեռնարկը ողջունելով հանդերձ պէտք է ըսել, որ կային կազմակերպական որոշ թերութիւններ եւ Երկապացունքն էր արդարացի կերպով, հաւանաբար չէր կատարւած համապատասխան քարոզչութիւն:

ԹԱԹԵՎԻՑ

«ԱԶԱՏ ՕՐ»Ի ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱԳՐԱԳԷՏ - ՊԱՐԱԳԷՏ ՆԱԻՐԱ ԿԻԼԻՉԵԱՆԻ ՀԵՏ

Ժողովրդական ստեղծագործութեան կարեւոր մէկ մասը կը կազմէ ժողովրդային պարը: Հայկական ժողովրդական պարերը անխառնակ դարերու կնիքը կը կրեն: Հայ պարը ընդհանրապէս կը յատկանշուի թէ՛ քնարական նազանքով եւ թէ՛ առնական եռանդի զրսեւորումով:

Հայաստանի մէջ հազարամեակներ առաջ գոյութիւն ունեցած է տոնիկ ու ծիսական պար, որ պատկերուած է Ուղտասարի ժայռապատկերներուն մէջ, իսկ նորագոյն ժամանակներուն եղած են յատուկ պարատուներ կամ խաղատուներ: Այս նիւթին շուրջ Աթէշքի «Ազատ Օր» թերթը հարցազրոյց մը ունեցած է հայ ժողովրդական պարի գիտակի մը՝ ազգագրագէտ-պարագէտ Նաիրա Կիլիչեանի հետ:

Նաիրա Կիլիչեան աւարտած է իսախառն Արովեանի անուան մանկավարժական հիմնարկի պարարեւեստի բաժինը, իսկ Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայի ակադեմիայի արուեստի հիմնարկին մէջ պաշտօնավարած է «Հայ ժողովրդական պարերուն պար»ը նիւթով գիտական ատենախօսութիւնը. ապա ընտրած է հայ ժողովրդական պարարուեստը ուսումնասիրելու, զրի առնելու եւ հայ աւանդական պարի հոլովոյթին պատմութիւնը վերադասաւորելու, կրկին կերտելու ուղղութիւնը: Ան նշանակուած է Հայաստանի մէջ ԵՈՒՆԵՍԿՕ-ի կից «Պարի միջազգային խորհուրդ»ի ներկայացուցիչ:

Ան նշած է, թէ պարագրութիւն, շարժագրութիւնը սկսած է ժե. դարերի եւ պահպանուած են Մարգարիտ Աւետիսեանի արձանագրութիւնները: Անցեալ դարու երեսնական թուականներուն, Սրբուհի Լիսիցիան Պերլինի մէջ հետեւելէ ետք Ռուստով Վան Լա-

ԼՕԽԸ ՆՇԵՑ ՄԱԿԻ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՕՐԸ



Սեդա Խաղչեան



Շաքէ Եագուլեան



Մայտա Սարգիսեան-Սրուբեան

ՄԱԿԻ կամաւորներու օրուան առիթով ԼՕԽԻ «Կազդուրման Կա-Շրջանային վարչութեան քարոզչական յանձնախումբը Երկուշաբթի, 3 Դեկտեմբեր 2001ի առաւոտեան ժամը 11:00ին կազմակերպած էր հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան ԼՕԽԻ տարբեր մասնաճիւղերու անդամները: Հանդիպումը տեղի ունեցաւ ԼՕԽԻ «Ա. Պուրջուրեան» ընկերաթշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ:

ԼՕԽԻ քայլերգին ունկնդրութեան ետք խօսք առաւ Մայտա Սարգիսեան-Սրուբեան, որ բարի դալուստ մաղթելէ

Փուլեան, որ եղած է ԼՕԽԻ «Կազդուրման Կա-Շրջանային պատասխանատու: Ան ներկայացուց տարիներու ընթացքին ԼՕԽԻ «Կազդուրման Կա-Շրջան»ին մէջ ընթացող կամաւոր այն աշխատանքը, որուն ակնատեսը եղած է ինք: Ան ըսաւ, որ ԼՕԽԻ ամառային ճամբարը կը հետապնդէ մարդկային երկարամիջ շաբաթական զանգուածային նպատակներու ինքնաշարժ, վարուելակերպին, սնունդին, կրթական ծրագրերներուն: Ան շեշտեց, որ ԼՕԽԻ կամաւորին հիմնական յատկա-

աւելցուց, որ այս բոլորին տիպարը եղած են Լիբանանահայ Օգնութեան խաչը եւ անոր մասնաճիւղերը: Ապա դասախօսը արժեւորեց ԼՕԽԻ բոլոր անդամներուն ու կեդրոններուն աշխատանքը:

Դասախօսը ըսաւ, որ կան կամաւորներ, ինչպէս՝ Ֆետայիները, որոնք գերագոյն զոհաբերութեամբ կը զոհեն իրենց ապրելու իրաւունքը՝ այլ գերագոյն նպատակներու իրագործման եւ այլ կեանքի փրկելու համար: Իր խօսքի աւարտին Շ. Եագուլեան կողմը կողմը յատկապէս հայ մայրերուն, որ աւելի եւս



Ներկաներն մաս մը

ետք շնորհակտեց ԼՕԽԻ կամաւորները իրենց օրուան առիթով: Ան կամաւոր աշխատանքի լաւագոյն օրինակը նկատեց ԼՕԽԸ, որուն կամաւորներուն աշխատանքը կը կայանայ նուիրումի, լուր աշխատանքի եւ ծառայութեան մէջ: Ան յիշեցուց, որ կամաւոր ծառայութեան համար լիբանանահայ գաղութին մէջ կայ գործունէութեան ընդարձակ դաշտ:

Օրուան բեմավարն էր Ժանիկ Դանիլեան-Մարգարեան, որ յաջորդաբար ներկայացուց երկու դասախօսները: Առաջին դասախօսն էր Գարուիկ

Նիշն է տալ՝ առանց փոխադարձ ակնկալիքի:

Ապա խօսք առաւ Շաքէ Եագուլեան, որ ներկայացուց կամաւոր բանին իմաստը եւ մեր կեանքին մէջ անոր ունեցած կարեւորութիւնը: «Կամաւոր բառացիօրէն կը նշանակէ ինքնաբերական գիտակցաբար տրուած: Սակայն այսօր այս բառը ունի տարբեր իմաստ»: Ան նշեց, որ կամաւոր են անոնք, որոնք ինքնաբերական կերպով կը ծառայեն ազգային եւ համամարդկային արժեքներու պահպանման ու նպատակներու իրագործման համար եւ

Լիւսի Թիւթիւնճեան

նուիրուածութեամբ փառքին հայկական արժեքներուն պահպանման եւ զանոնք նոր սերունդին փոխանցելու աշխատանքին:

Ապա խօսք առաւ



Ժանիկ Դանիլեան-Մարգարեան

ԼՕԽԻ յարաբերական յանձնախումբի անդամ Լիւսի Թիւթիւնճեան, որ



Գարուիկ Փուլեան

ներկայացուց ԼՕԽԻ կամաւորական աշխատանքին մասին իր վկայութիւնները:


Հանդիսութեան աւարտին խօսք առաւ ԼՕԽԻ Շրջանային վարչութեան ատենապետ Սեդա Խաղչեան, որ ներկայներուն շնորհակալութիւն յայտնեց իրենց կատարած կամաւոր աշխատանքներուն համար եւ շնորհակտեց անոնց տօնը:

Շար.ր՝ Էջ 8

ՀԱՅԵՐԸ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ - Բ.

ՀԱՅԵՐՈՒ ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ ԲՈՆԱԳԱՂԹԵՐ ԴԷՊԻ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

- ՀԱՅԿԱԿԱՆ ԶՕՐԵՐ ԸՖՓԹԱՂՆԵՐՈՒ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ



Ընթաթ

Պարսից արքայից արքայ Շապուհ Բ-ի կողմէ կազմակերպուած դէպի Աֆղանիստան հայոց առաջին մեծ բռնագաղթէն ետք, հետագային, Սասանեան գահակալներ Յագկերտ Բ-ի, Պերոզի, խոսրով Ա-ի եւ խոսրով Բ-ի օրերուն եւս հայեր զինուորական ծառայութեան բերուեով եւ աքսորի պատճառով տեղափոխւած են կայսրութեան հեռււոր այդ երկրամասերը։

ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆԻ ԲԱՆԱԿԸ ՀԵՓԹԱՂՆԵՐՈՒՆ ԴԵՄ

Կեդրոնական Ասիոյ, Աֆղանիստանի եւ յարակից երկրամասերուն մէջ Ե. դարուն սկիզբը պատմութեան ասպարէզ դիւան հեփթաղները։ Անոնք մինչ այդ կը բնակէին չինական Մեծ Պարիսպէն հիւսիս տարածուող տափաստաններուն վրայ եւ վրանաբնակ թափառաշրջիկներ էին։ Ծանօթ էին նաեւ հոա (հոաթուն), ճերմակ հոն անունով։ Հեփթաղներ մօտաւորապէս 400ին ներխուժեցին Աֆղանիստան, իսկ 427ին՝ խորասան։

Այս ժամանակ Հայաստան արդէն բաժնուած էր (387ին) Սասանեան Պարսկաստանի եւ Բիւզանդական կայսրութեան միջեւ, եւ մեծ փոփոխեցեալ էր Սասանեան տիրապետութեան տակ։ Պարսիկներ, այլեւս անուանական դարձած Արշակունեաց թագաւորութիւնը ջնջելով (428ին), Հայաստանը սկսան կառավարել մարզպաններով։

Պարսից արքայից արքայ Վուամ Ե-ի (Բահ-րամ Գոռ) մահէն ետք անոր յաջորդեց զաւակը՝ Յագկերտ Բ., որ գահ բարձրացաւ 4 Օգոստոս 438ին։ Մուսուսնդ գրադաշտական, կատաղի եւ պատերազմասէր, ան շարունակ հայաթեց իր հպատակ ժողովուրդները, մանաւանդ՝ քրիստոնեաները։

Յագկերտ 440ին յարձակեցաւ Բիւզանդական կայսրութեան վրայ, ասպատակեց ու աւարի տուաւ Մծբինի շրջակայ գաւառները եւ խուճապահար փախցուց Բիւզանդական բանակները։ Թէոդոս Բ. կայսր ստիպուած հաշտութիւն խնդրեց․ կնքուեցաւ Բիւզանդիոնի համար աննպաստ դաշինք մը։

Կայսրութեան թիկունքը ապահովելէ ետք Յագկերտ հրովարտակ հանեց եւ հաւաքեց իրեն հպատակ բոլոր ժողովուրդներու զօրքերը եւ 442ին յարձակեցաւ հեփթաղներուն եւ այլ ցեղախումբերու վրայ, որոնք սպառնալիք մը դարձած էին կայսրութեան հիւսիս - արեւելեան սահմաններուն։ Յագկերտի բանակին միացան նաեւ հայկական զօրագունդեր, որոնք սպարապետ Վարդան Մամիկոնեանի հրամանատարութեան տակ մեկնեցան պատերազմի։

Հեփթաղներուն եւ անոնց միացած ցեղախումբերուն դէմ Յագկերտի շղթայագերծած պատերազմը զխաւորարար ներկայ Աֆղանիստանի եւ յատկապէս հիւսիս - արեւմտեան շրջաններուն եւ հարաւային թուրքմենիստանի մէջ կեդրոնացած էր․ կռիւները հետզհետէ սաստկացան, տեւեցին տարիներ եւ ընթացան արքայից արքային համար մերթ յաջողութիւններով ու մերթ ձախողութիւններով։ Սպարապետ Վարդան Մամիկոնեան եւ իր զօրագունդերը մեծ հերոսութիւններ գործեցին, մանաւանդ՝ Մարվիւոտի (ներկայ թուրքմենիստանի հարաւային Մարի կամ Մերվ քաղաքը) կռիւներուն ընթացքին։ Արքայից արքան, որ տարբեր առիթներով եկեւ նաժ մարտական տեսքով եւ ներկայ եղած էր ռազմաճակատները եւ ներկայ եղած էր կռիւներուն, անձնապէս ճանչցաւ հայոց սպարապետը, ականատես եղաւ անոր հերոսական խոյանքներուն եւ հիացաւ անոր քաջութեան։

Հեփթաղներուն դէմ մղուած այս ընդհատ պատերազմներուն ընթացքին, հայկական, ինչպէս նաեւ վրացական եւ աղուանական զօրագունդերը միակ քրիստոնեայ ուժն էին հեռաւոր արեւելքի մէջ։ Յագկերտ առիթը յարմար նկատելով հոն, հայ, վրացի եւ աղուան իշ-

խաններուն զանազան շարշարանքներու միջոցով պարտադրեց, որ ուրանան քրիստոնէութիւնը եւ զրադաշտական դառնան, բայց քրիստոնեայ իշխանները մերժեցին։

Սասանեան բանակին եւ հեփթաղներուն միջեւ մղուած քանի մը տարւան կռիւները՝ ներկայ Աֆղանիստանի եւ անոր յարակից կարգ մը գաւառներուն մէջ, թէեւ չյաջողեցան ընկճել պատերազմիկ հեփթաղները, բայց ծանր կորուստներու ենթարկեցին զանոնք։ Այնուհետեւ

հայկական զօրագունդերը պատուով իրենց պարտականութիւնը կատարած՝ սպարապետ Վարդան Մամիկոնեանի զխաւորութեամբ վերադարձան հայրենիք։

Ժամանակ մը ետք Յագկերտ Բ. արքան կրօնափոխութեան հրովարտակ ղրկեց հայոց, որպէսզի անոնք ուրանան քրիստոնէութիւնը եւ զրադաշտական դառնան։ Սակայն հայերը մերժեցին, մինչեւ որ 26 Մայիս 451ի Աւարայրի ճակատամարտին հայկական բանակը կոտուեցաւ, սպարապետ Վարդան Մամիկոնեան նահատակուեցաւ եւ պարսկական բանակը նուաճեց Հայաստանը։

ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԱՔՍՈՐ ԴԷՊԻ ՀԵՐԱԾ

Պատերազմի աւարտէն ետք, ապստամբութեան մասնակցած հայոց հոգեւորականներն ու նախարարներ թագաւորին հրամանով աքսորի դատապարտուեցան եւ քշուեցան կայսրութեան հիւսիս - արեւելեան կողմը, Աֆղանիստանի սահմանին մօտակայ վրկանից աշխարհը։ Անոնք հոն մնացին մինչեւ 454, երբ Յագկերտ, հեփթաղներուն դէմ պատերազմի գացած ժամանակ իրեն հետ տարաւ զանոնք, բայց ճամբան արգելափակեց Ապար աշխարհի նիւշապուհ քաղաքի բերդին մէջ, բացի Սամուէլ եւ Աբրահամ քահանաներէն, զորս իրեն հետ տարաւ մինչեւ Աֆղանիստանի կողմերը։

Հեփթաղներուն դէմ շղթայագերծած Յագկերտի այս արշաւանքը, սակայն, պարտութիւն մը եղաւ պարսկական բանակին համար։ Թագաւորը, երբ ուզեց իմանալ պարտութեան պատճառը, մոգերը ըսին, թէ պատճառը մեղապարտ հայ քահանաներն են, որոնք տակաւին անպատիժ կը մնան։ Արքայից արքան հաւատաց մոգերուն եւ հրամայեց դահիճներուն, որ իր մօտ գտնուող Սամուէլ եւ Աբրահամ քա-



Խըրխըզ քոչուորներ Աֆղանիստանի հիւսիս-արեւելեան Փամիրի լեռներուն վրայ։

հանները կարաւանէն հեռու տեղ մը տանին եւ զխտտեն, որպէսզի անոնց ոսկորները չգտնուին։

Թագաւորին հրամանը գործադրուեցաւ եւ երկու քահանաները, որոնք Այրարատի Արածոյ գիւղէն էին, նահատակուեցան 7 Յուլիս 454ին։

Իսկ նիւշապուհի բերդին մէջ արգելափակւած նախարարները այնուհետեւ աքսորուեցան Աֆղանիստանի Հրեւ (ներկայ Հերաթ) քաղաքը, ուր անոնք շղթայակապ պիտի սպասէին մահապատիժի։ Բայց անոնք իրենց մաքուր կենցաղով չափեցան դահիճներուն համակրան եւ հոն, աքսորի մէջ սորվեցան հայոց գիրն ու գրականութիւնը։ Անոնց մեծապէս օժանդակեցին Միջագետք աքսորուած խորէն եւ Աբրահամ քահանաները, որոնք իրենց սրբակեցութեամբ տեղացի ժողովուրդին համակրանքը շահեցան եւ տարուէ տարի անոնցմէ նուէր-

ներ հաւաքեցին նախարարներուն համար ու անծայրածիր ճանապարհներ կտրելով՝ անդադար երթեւեկեցին Միջագետքէն Հրեւ, այսինքն՝ կայսրութեան մէկ ծայրէն միւսը, հոգալու համար կալանաւոր նախարարներուն կարիքները։

Հրեւի Հարեւշդոմ Շապուհ իշխանը, որուն յանձնուած էին կալանաւոր հայ նախարարները, ազդուած անոնց ազնիւ վերաբերմունքէն, անընդհատ նաժակներ գրեց արքունիք եւ պատմեց ու յիշեցուց կալանաւորներու տառապանքներուն մասին, մինչեւ որ արքայից արքան հրամայեց արձակել նախարարներուն կապանքները, իշխանավայել զգեստներ հագցնել անոնց, թշուալ տրամադրել եւ արքունի զօրքին հետ պատերազմի ուղարկել (Աֆղանիստանի խորերը ընդհատ պատերազմը կը շարունակուէր պարսկական բանակին եւ հեփթաղներուն միջեւ)։

Նախարարները կատարեցին իրենց ծառայութիւնը եւ մեծ քաջագործութիւններ գործեցին, մինչեւ որ անոնց հերոսութիւններուն լուրը հասաւ թագաւորին, որ հրամայեց իր մօտ բերել նախարարները։ Հանդիպելով իրարու, Յագկերտ արքան, իբրեւ վարձատրութիւն նախարարներու անկեղծ վերաբերմունքին, խոստացաւ վերադարձնել զանոնք իրենց հայրենի երկիրը, բայց մինչ այդ, 457ին մահը վրայ հասաւ։

Յագկերտ արքայի մահէն ետք անոր յաջորդեց անդրանիկ զաւակը՝ Որմիզդ, բայց միւս որդին՝ Պերոզ (կամ Փիրուզ), գահը յափշտակելու համար ելաւ եղբօր դէմ, հեփթաղներու օգնութեամբ յաղթեց անոր, սպանեց զայն եւ գահ բարձրացաւ 459ին։

Գահակալութենէն ետք, նոյն տարին իսկ, Պերոզ Հրեւի մէջ պահեց հայ նախարարները եւ իր դաշակին զաւակը՝ Հըրատովչնասպը յատուկ յանձնարարութեամբ ղրկեց Հրեւ, հայ նախարարները ազատելու եւ անոնց յայտնելու արքայից արքային ներման շնորհքը։

Բայց այս ժամանակ արդէն տիրուանից Վաչէ թագաւորը մագքուլութիւնը եւ կովկասեան լեռնական տասնմէկ ցեղախումբերու թագաւորներուն հետ դաշնակցած՝ ապստամբութեան դռը բարձրացուցած էր եւ կայսրութիւնը խռովայոյզ վիճակի մէջ կը գտնուէր։ Հետեւեալը Պերոզ այս իրավիճակին մէջ յարմար չգտաւ նախարարներուն ազատ արձակումը։

Այս պատճառով ալ նախարարները մնացին Հրեւ, բայց արքունի գանձարանէն թշուալ սկսան տանալ։ Թշուալ յատկացուեցաւ նաեւ Հայաստան մնացած անոնց կիներուն։ Պերոզ

այնուհետեւ զանոնք առաւ արքունի ծառայութեան մէջ եւ անոնց հեծակազունդներ յանձնեց։ Նախարարները Աֆղանիստանի մէջ հեփթաղներու դէմ մղուած կռիւներուն մասնակցեցան մինչեւ 464։ Անոնք Հրեւ մնացին մինչեւ 465, երբ աղուանից դիմադրութիւնը նուաճելէ ետք Պերոզ ազատ արձակել տուաւ զանոնք եւ վերադարձուց Հայաստան։

Պերոզ արքան 484 Յուլիսին անհետ կորաւ հեփթաղներու դէմ պատերազմին ժամանակ։ Անոր յաջորդը՝ Վաղարշ (484 - 488) յանձն առաւ տուրք վճարել հեփթաղներուն, խաղաղութիւնը պահպանելու համար։

ՀԱՅԵՐՈՒ ԲՈՆԱԳԱՂԹ ԴԷՊԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Սասանեան կայսրութեան քաղաքական իրավիճակը փոխուեցաւ, երբ 531ին գահ բարձրացաւ խոսրով Ա. Անուշիրվան (անմահ հօգի)։ Կեդրոնական իշխանութեան հեղինակութիւնը ամրապնդելու նպատակով ան բարեփոխումներ կատարեց, ջնջեց տեղական իշխանութիւնները, ազդեցութեան ենթակայ աշխարհա-

զօրը եւ կանոնաւոր ու տեւական բանակ ստեղծեց։ Կովկասեան լեռնականներու յարձակումները կասեցնելու նպատակով Դերբենդի մէջ ամրութիւններ կառուցեց, իսկ Կասպից ծովէն արեւելք, ներկայ թուրքմենական տափաստաններուն մէջ պարիսպներ կառուցեց։ Անոր օրով զարգացան մշակոյթը, արուեստները եւ քաղաքները։

Իր գահակալութենէն ետք խոսրով Անուշիրվան պատերազմի ձեռնարկեց Բիւզանդական կայսրութեան եւ անոր արար զինակիցներուն դէմ, իսկ արեւելքի մէջ կռուի բունուեցաւ հեփթաղներուն դէմ։ Հեփթաղները նուաճելու համար ան դաշնակցեցաւ կեդրոնական ասիական թրքական ցեղախումբերու հետ։

Մինչ երկու ճակատներու վրայ կռիւները կը սաստկանային, խոսրով Ա. 536ին սկսեալ եւ մինչեւ 538 Բիւզանդական Հայաստանէն մեծ թիւով հայեր, ինչպէս նաեւ յոյներ բռնագաղթի մղեց եւ զանոնք տարաւ բնակեցուց Սա-

գաստանի (հարաւային Աֆղանիստան), ոմանք ալ Վրկանքի (հիւսիս - արեւելեան Իրան) մէջ։


Հեփթաղներուն դէմ շարունակուող կռիւներուն իրենց մասնակցութիւնը սկսան բերել հայկական զօրագունդերը։ խոսրով Ա. մինչեւ 552 նուաճեց հեփթաղները, իսկ 553ին մեծ արշաւանքի ձեռնարկեց դէպի Աֆղանիստանի խորերը, եւ կատաղի կռիւներէ ետք, 554ին կործանեց հեփթաղներուն պետութիւնը, գրաւեց ներկայ գրեթէ ամբողջ Աֆղանիստանը եւ հասաւ մինչեւ Ինտոսի հովիտը։

Պատերազմի աւարտէն ետք եւս արքայից արքան կարեւոր թիւով հայեր տարաւ ու բնակեցուց Աֆղանիստանի խորերը, յատկապէս հարաւային շրջանները՝ Սագաստանի մէջ, պաշտպանելու համար կայսրութեան հեռաւոր այդ երկրամասերը։

Աֆղանիստանի հեռււոր ու անձնօթ երկրամասերը երթալու պարտաւորութենէն զերծ մնալու համար շատ մը հայ նախարարներ ու զօրավարներ հեռացան Հայաստանէն։

խոսրով Ա-ի եւ հեփթաղներու միջեւ կռիւները շարունակուեցան 558էն 568, մինչեւ որ հեփթաղները հիմնովին ջախջախուեցան։

Սագաստան եւ աֆղանական այլ շրջաններ հաստատուած հայերը, վայրենաբարոյ ցեղախումբերու դրացնութեան եւ անպատային խտաշուռչ կլիմայով այդ միջավայրին մէջ, հետզհետէ կազմակերպուեցան․ այդ նոյն ժամանակաշրջանին, ինչպէս Վրկանքի եւ խուժաստանի, նոյնպէս եւ Սագաստանի հայերը եկեղեցական - հոգեւոր վարչութիւն կազմեցին ու առաջնորդական թեմ ստեղծեցին։



Լաստով ձամբորդութիւն Շեմստ գետին վրայէն

ՀԱՅԵՐ՝ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ

խոսրով Բ. Ափարկէզ կամ Փարվիզ (յաղթող), Որմիզդ Դ-ի զաւակը, սպարապետ Վահրամ Չուբինի ապստամբութեան ժամանակ, 591ին բարձրացաւ Սասանեաններու գահը, բայց ազնուականներու դաւադրութեան եւ ապստամբութեան վտանգէն վախնալով փախաւ Բիւզանդական սահմանը։ Բիւզանդիոնի Մորիկ կայսրը, Հայաստանի արեւելեան մասը, Վրաստանը եւ Միջագետքի կարեւոր ամրութիւնները ստանալու պայմանով օգնեց անոր, եւ Բիւզանդական, հայկական ու խոսրով Բ-ի բանակը պարտութեան մատնեցին Չուբինը։ Այնուհետեւ տեղի ունեցաւ Հայաստանի երկրորդ բաժանումը։


Մորիկ կայսր այնուհետեւ ձեռնարկեց հայերը բռնագաղթի մղելու քաղաքականութեան, Հայաստանը պարպելու համար իր ռազմունակ տարրերէն, եւ այս իմաստով համաձայնութիւն գոյացուց խոսրով Բ-ի հետ։ Կայսրը հայոց նախարարները պիտի տեղափոխէր Թրակիա, իսկ խոսրով Բ.՝ իր կայսրութեան արեւելեան ծայրամասերը։

Մորիկ կայսեր առաջարկին ընդառաջելով՝ խոսրով Բ. բռնագաղթ կազմակերպեց․ առաջին անգամ 595ին նախարարական եօթը տուներ եւ անոնց մերձաւորները աքսորուեցան Սպահանի կողմերը․ այնուհետեւ անոնց հետեւեցան ուրիշներ․ անոնց մէջ էր պարսկական բանակին մէջ անուանի դարձած Մթատ Բագրատունի, որ հետագային Վրկանքի մարզպան նշանակուեցաւ։ Նախարարներուն եւ անոնց զօրքերուն կայան նշանակուեցաւ Սպահան քաղաքը։

Այս ժամանակ խոսրով որոշեց իր հօր մահւան վրէժը լուծել եւ սպաննել իր մօրեղբայրները՝ Վնդոն եւ Վստամը։ Վնդօ սպաննուեցաւ, բայց Վստամ փախաւ։ Հայ նախարարները օգնեցին խոսրովի՝ Վստամը նուաճելու համար, բայց Վստամ փախաւ եւ գնաց Պաքթիա (հիւսիսային Աֆղանիստան)։ խոսրով, ստիպուած, նախարարներուն հետ միասին վերադարձաւ, բայց յետոյ սպաննել տուաւ հայ երկու նախարարները։ Միւս նախարարները վրդոված՝ ապստամբեցան եւ փախան դէպի Պաքթիա, միանալու Վստամի։ Պարսկական զօրքերը սկսան հետապնդել հայերը եւ անոնցմէ քանի մը հօգի սպաննեցին, բայց մնացելները հասաւ Պաքթիա եւ մտան Վստամի հրամանատարութեան տակ։ Անոնք մնացին հոն եւ հաւանաբար հետագային խառնուեցան տեղացիներուն մէջ։

Ա Ֆ Ի Լ

**ԻՆՔՆԱՇԱՐԺԻ
ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ**



●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ԱՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ

**ՀԱՍՑԷ.- ԱՖԷՏԻ ՇԵՆՔ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 ԵՆ 01-242557**

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՌԻՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԵՆԻ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԱԲԵԼԻ ԿԸ ՍԱՍՏԿԱՆԱՆ

Աֆղանիստանի մէջ թալեպաններու եւ Ռիսամա Պըն Լատենի վրայ ճնշումները աւելի եւս թափ ստացած են երէկ: Արդարեւ, աֆղան ցեղախումբերու հարիւրաւոր անդամներ երէկ կ'ուղղուէին դէպի երկրին արեւելեան լեռները՝ թալեպան ուժերն ու Պըն Լատենը հետապնդելով, մինչ հաւաքաւոր գօտիին մէջ զինեալներ կ'ըսէին, թէ շատ աւելի մօտեցած են թալեպաններու վերջին միջնաբերդը հանդիսացող Գանսահար քաղաքին:

Ճալալապատի զինուորական հրամանատար Հապրաթ Ալիի մէկ բանբերը յայտնած է, թէ քաղաքին խորհուրդը շուրջ 2000 տեղացի շարժման մէջ դրած է՝ թալեպաններուն ու անոնց հետեւորդները Թորա Պորայէն դուրս քշելու համար:

Ան ըսած է, թէ բախումները տակաւին չեն սկսած, սակայն կ'ակնկալէր, որ անոնք սկսէին այսօր առաւօտուն:

Ամերիկեան ռազմական օդանւերը յաճախ ոմբակոծած են Թորա Պորայի շրջանը, ուր ըստ տեղեկութիւններու՝ Պըն Լատեն ստորեկրեայ ապստանարան մը կառուցած է:

Օդանւերը երէկ շարունակած են ոմբակոծել Գանսահարը, որուն կը մօտենային ցեղախումբերու զինեալներ:

Աֆղանիստանի նախկին նախագահին կողմնակից փաշթուն ղեկավար Համիտ Քարպայի եղբայրը՝ Ահմէտ Քարպայ, երէկ յայտնած է, թէ իր եղբոր ուժերը գրաւած են Շահուալի Բոթի շրջանը, որ Գանսահարէն շուրջ 20 քմ. հիւսիսարեւմուտք կը գտնուի:

Թալեպանները հերքած են, թէ Շահուալի Բոթը ինկած է:

Քարպայի համաձայն՝ ծանր բախումներ տեղի ունեցած են Գանսահարի նախկին կառավարիչ Կուլ Աղա Շիրպայի փաշթուն հետեւորդներուն եւ Պըն Լատենի զինուորաբար արաբ զինեալներուն միջեւ՝ Գանսահարի օդակայանին մէջ:



Ամերիկեան ծովուծին պատկանող «Զոպրա» ուղղաթիռներ կը պատրաստուին մեկնելու դէպի Գանսահար:

Աֆղան «Էյ. Այ. Փի.» լրատու գործակալութիւնը հաղորդած է, թէ ամերիկեան ռազմական օդանւեր օդակայանը եւ Գանսահարի հարաւը գտնուող լեռներու վրայ թիրախներ ոմբակոծած են երէկ առաւօտուն, մէջբերելով թալեպան աղբիւր մը, որ ըսած է, թէ օդային յարձակումները «իրաքանչիւր 5 վայրկեանը անգամ մը տեղի կ'ունենային»:

«Էյ. Այ. Փի.»ի համաձայն՝ արեւելեան Նանկարհար նահանգին մէջ, որուն մայրաքաղաքը Ճալալապատն է, 115 քաղաքայիններ սպաննուած են անցնող 5 օրերուն:

Մինչ այդ, քուէյթեան թերթ մը հաղորդած է, թէ Պըն Լատենի «Քայիտա» ցանցին գլխաւոր բանբերը՝ Սուլայման Պուլայս յայտնած է, թէ սրբազան պատերազմը պիտի շարունակուի, նոյնիսկ եթէ Պըն Լատեն մահանայ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՍԸ ՃՈՒՐՋ ՀԱՍՏԱՅՆՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, աֆղան հատուածներ երէկ Գերմանիոյ մէջ համաձայնութիւն գոյացուցած են փոխանցման կառավարութեան մը գծով՝ շաբթուան մը լարուած մթնոլորտի մէջ կայացած բանակցութիւններէ ետք:

ՄԱԿի պաշտօնատարներ յոյս յայտնած են, թէ հատուածները մօտ առեւտրային համաձայնութիւն մը պիտի կնքեն:

տի կնքեն՝ 29 անդամ հաշուող փոխանցման կառավարութեան մը կազմին գծով:

Փոխանցման կառավարութիւնը իշխանութեան ղեկը պիտի ստանձնէ 6 ամսուան համար, մինչեւ որ «Լոյա Ճըրկա» մը (աւանդական ժողով մը) կազմուի:

Այս վերջինը պիտի ընտրէ փոխանցման իշխանութիւն մը, որ շուրջ 18 ամիս պիտի կառավարէ երկիրը, մինչեւ որ ահմանդուրիւն մը մշակուի եւ մնայուն կառավարութիւն մը ընտրուի:

Նախկին թագաւորին Կետեւորդ Համիտ Քարպայ հաւանաբար ստանձնէ փոխանցման վարչակարգին նախագահութիւնը:

ՄԱԿի միջնորդութեամբ մշակուած ծրագիրին համաձայն՝ փոխանցման ղեկավարը պիտի ունենայ 5 փոխանորդներ, որոնց կարգին կին մը եւ կառավարութեան 23 այլ անդամներ:

Եւրոպական Միութեան ընկերային հարցերու յանձնակատար Աննա Տիամանթոփուլու եւ ՄԱԿի մարդկային իրաւանց գործակալութեան պատասխանատու Մէրի Ռոպինսոն Պրիքսէյի մէջ երէկ Աֆղան կիներու վեհաժողովի մը բացումը կատարած են եւ յայտնած, թէ կիներուն աւելի քան խորհրդանշական դեր պիտի տաւորութիւն պէտք է տրուի կառավարութեան մէջ՝ իբրեւ նախապայման վերականգնման միջազգային օժանդակ:

կութեան:

Պոնի համաձայնութիւնը նաեւ կոչ կ'ուղղէ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին, որ միջազգային ուժ մը ղրկելու հարցը նկատի ունենայ՝ մայրաքաղաք Քապուլի եւ անոր շրջակայ գօտիներուն մէջ ապահովութեան պահպանումին համար:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ, որ Պուքրէշ կ'այցելէր երէկ, յայտնած է, թէ միջազգային նման ուժի մը համար ժամանակը չէ հասած տակաւին եւ թէ անհրաժեշտ է, որ իրենք աֆղանները մաքրագործեն «աւազակներէ», որոնք կը խոչընդոտեն անօթիներուն, անտուններուն եւ հիւանդներուն օժանդակութիւն հասցնելու ճիգերը:

ՄԱԿի «ԵՌԻՆԻՍԷՖ» գործակալութեան տնօրէնը՝ Քէրըլ Պէլըմի, երէկ յայտնեց, թէ հապարաւոր, նոյնիսկ միլիոնաւոր երեխաներ գոյատեւման պայքար մը կը դիմագրաւեն, մինչ ամերիկեան ռուքերը կը տեղան եւ ցամաքային բախումները թափ կը տարան եւ ձմեռը կը մօտենայ:

ԵԱՀԿ ՀԱՎԱՍՏԱՐԵԿԱԿԱՆ ԲՆՈՅԹԻ ԾՐԱԳԻՐ ՍԸ ԿՈՐԴԵՐԵ

Միւս կողմէ, 55 անդամ հաշուող ԵԱՀԿ երէկ որդեգրած է հակահաբեկչական բնոյթի ծրագիր մը, զոր ողջունած է Մ.

Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ, իբրեւ «վճռական արտայայտութիւն մը՝ մեր հաւաքական կամքին»:

Սակայն Փաուըլ կարգ մը անգամ պետութիւններուն կոչ ուղղած է յաւելեալ քայլերու դիմելու՝ ահաբեկչութեան տարածումը կասեցնելու համար:

Աֆղանիստանի վերականգնման հարցով 10 պետութիւններ շրջապտոյտի մը ձեռնարկելով, Փաուըլ Ռումանիոյ մէջ կայացած ԵԱՀԿի վեհաժողովին յայտնած է, թէ Ուաշինկթըն քաջալերուած է Եւրոպայի, ներառեալ՝ Ռուսիոյ ի գործ դրած ճիգերով՝ պայքարելու համար ահաբեկչութեան դէմ:

ԵԱՀԿ որոշած է պայքարիլ ահաբեկչութեան եւ անոր տուն տուող պատճառներուն դէմ:

Սակայն պատուիրակներ յայտնած են, թէ ԵԱՀԿի ճիգերուն կեղծոյն աւելի յայնաժիր պիտի ըլլայ եւ պիտի ընդգրկէ աղքատացած երկիրները կայունացնելու քայլեր՝ լուծելու համար անհաւասարութեանց հարցը, որով կը սնանի ահաբեկչութիւնը:

Մինչ այդ, խորհրդարաններ կ'ըկ պատրաստակամութիւն յայտնած է արեւմտեան ռազմական կարգ մը օդանւերու արտոնութիւն տալու, որ իր օդուծի խարխիւններէն մէկը օգտագործեն, սակայն բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնած է, թէ արեւմտեան ներկայութիւնը սահմանափակ եւ կարճատեւ պիտի ըլլայ:

●ԱՄԵՐԻԿԵԱՆ կառավարութիւնը Երկուշաբթի օր տօնական օրերու կապուած զգուշացում իրապարակած է՝ յարձակումներու մասին, Մ. Նահանգներու եւ արտասահմանի մէջ ամերիկացիները խիստ պատրաստ վիճակի մէջ դնելով, Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ի վեր երրորդ անգամն ըլլալով:

(ՌՈՅԸԸԸԸ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5024

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵԱՑ
1. Խոյլ, գեղձերու ուռեցք - Մասնիկ (Հակ.):	1. Հոգածու - Եղբայրական սեղան:
2. Ճակատագիր - Անարդար:	2. Կմախքի իւրաքանչիւր մաս - Զերմուկներ գտնող իշապանը:
3. Սիւմանթոյի ծննդավայրը - Իգական օտար անուն:	3. Կապտորակ ճերմակ մետաղ - Յոյն դից:
4. Հայոց կաթողիկոս՝ Անանիա Ա. - Դրկից գիրեր:	4. Սարափ - Անպարտելի:
5. Յարաբերական դերանուն - Միացեալ Նահանգներու 37րդ նախագահը:	5. Մանրակծծի ժխտական մասնիկ:
6. Տղամարդ - Օձի տեսակ:	6. Պարտք - Ռեմոն, արրոն:
7. Յետոյ - Սորեակ, մեծահասակ կորեկ:	7. Յուրաքանչեւ - Կանգնող (Հակ.):
8. Անգուլթ, դաժան - Ստինք:	- Հայ ազատագրական պայքարի ռազմիկներ:
9. Տեղահանում - Արական անուն - Այրուբենէն:	9. Սեւ ազուակ - Մարկանց լեռնապարի գաղթներէն - Նոյն տառերը:
10. Վերջ, լրում:	10. Կշտամբանք - Բրինձ:
11. Ափրիկեան երկիր - Թիւ Նոյցով պտուղ:	11. Դրկից գիրեր - Կովկասեան երկիր:

ԹԻԻ 5023

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԵՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Բ	Գ	Դ	Ե	Ն	Ը	Ս	Թ	Պ
2	Բ	Գ	Օ	Տ	Ր	Ա	Ս	Պ	Բ	Գ
3	Գ	Ա	Տ	Մ	Ա	Յ	Պ	Ա	Ս	Ա
4	Ա	Գ	Բ	Ր	Ա	Յ	Պ	Ա	Ս	Ա
5	Ն	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
6	Ա	Տ	Ր	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
7	Գ	Ս	Ր	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
8	Բ	Տ	Ր	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
9	Օ	Տ	Ր	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
10	Ն	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա
11	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ս

MASTER MALL
ԱՐԺԵԱԴՈՐ ՆՈՒԵՐՆԵՐՈՒ
ՎԻՃԱԿԱՇԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ

Master Mallի վիճակահանութիւնը կայացաւ 3 Դեկտեմբեր 2001ին, Հարպոյեան առեւտրական կեդրոնին մէջ, ներկայութեամբ Լիբանանի պետական վիճակահանութեան ներկայացուցիչներ Թուֆիք Հաննայի եւ Ժոզֆ Հաշմի:

11 նուէրները շահեցան. Սարգիս Գրիգորեան (թիւ 29265).

Ճամբորդութիւն
Լոյիթա Հուշան (թիւ 28199). Էր քոնսիսիոնէ Մարիա Նաճարեան (թիւ 28894). Էր քոնսիսիոնէ Կարեն Արաքահամեան (թիւ 21975).

Լուացքի մեքենայ
Վերծին Յակոբեան (թիւ 29636).

Լուացքի մեքենայ
Վահագն Դաւիթեան (թիւ 27136). սքերթ Ուազեն Մունթահա (թիւ 1852).

պատկերասփիւռ
Շարլ Գալուստ (թիւ 22325). պատկերասփիւռ Կարօ Յովսէփեան (թիւ 19403) DVD ժանր Յարութիւնեան (թիւ 29834). փուռ Էլիզապէթ Գուլումեան (թիւ 2713).

Peugeot 206

ولعت الشَّوْبَةِ مَعَهُ

Panasonic

15" TC-15PM10R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
١٠٠ محطة
ريموت
\$ 185

هدية سماعة بقيمة \$ 20

العرض صالح فقط على أجهزة التلفزيون / الفيديو / الفيديو / كاميرا الفيديو المستوردة من قبل الوكيل الحصري: شركة توتونجيان ش.م.ل. ٢٠٠٢/١/٢٠ لغاية ٢٠٠١/١/١٩

مدلة العرض: من ٢٠٠١/١/١٩ لغاية ٢٠٠٢/١/٢٠

21" TC-21PM30R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
١٠٠ محطة
ريموت
\$ 305

وآلاف الهدايا داخل العلب

هدية راديو كاسيت بقيمة \$ 45

ՊԵՐԵՆԶԻ ԱՆԷ «ԱՎԱՏՈՒԹԻՒՆ» ՊԱՏԻՈՂԱԿԱՆ
 ԿԵՏ ԿԱՐԺ ԽԱՐՑԱԿՐՈՅԻ ՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՆԱԽԱ-
 ԲԱՐ ՕԱԿԱՆԵԱՆ ՂԻՍՏԻ ԽՈՒԱ, ԹԵ ԿԱՆ ԺՆՈՂ
 ԼԵՆՆԱԿԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԽԱՐԳՈՎ ՄԻՋԱԿԳՈՒԽԻՆ
 ԽԱՊԱՂԱՐԱՐ ՈՒԺՆՐՈՒ ԱՆՇ ԹՈՐՔԻԱ ԿՐՆԱՅ ՂԵՂ
 ՈՒՆԵՆԱՅ, ՄԻԺԱԺԱՆԱԿ ԱՆԷԼԵՆԵՂՈՎ, ՈՐ ԹՈՐ-
 ՔԻԱ Ոչ ԱՆԷ ԲԱՐՈՂԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՆՔ ՈՒՆԻ ԼԵՆՆԱ-
 ԿԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԽԱՐԳՈՎ ՎԵՐՈՒՅԻ ԽՐԱՏՈՒԹԻՒՆ
 ԿԱՏԻԱՆՃԵԼՈՒ, ԽՐՈՒԱԺ ԸՂԺԱՂՈՎ, ՈՐ ԱՆ ՀԱՐԱ-
 ԱԿԻՆ ԿՈՎԿԱԿԻ ԱՆՇ ԿՐ ՎԱՐԵ Ոչ-ԿԱՏՈՒՆՈՂԱ-
 ԿԱՆ ԶԱՊԱՐՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՅՆԱԺԱՌՈՒՆԻ
 ԽԱՂԱԿԱՆ ԿՈՂՈՒՆ ՆԿԱՏՈՒՄԸ:

- 1.- Ն. ԶԱՐԽՈՒՄԵԱՆ Փրկագինը
23.- ԱՐՄԱՆՏ Ասք սպասման
26.- Ս. ԶԻՐԵՃԵԱՆ Սիրոյ աշտանակը
29.- Յ. ՍԱՆՈՒԿԵԱՆ Սուսայիս
30.- » » Խաւարում
32.- » » Պահ գիշերական
34.- * * * Նոր թատրերգութիւն մո
35.- Պ. ԶԵՅԹՈՒՆՅԵԱՆ Խոր Վիրապ
55.- Կ. ՃԱՆՃԻԿԵԱՆ
Բանաստեղծութիւններ
59.- Շ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ
Բանաստեղծութիւններ
63.- Ա. ԶԱԿԱՐԵ Բանաստեղծութիւններ
67.- Պ. ՍԻՍՈՆԵԱՆ
Պոլսահայ բանաստեղծութեան նոր դպրոցը
76.- Ե. ԽԱՉԱՏՐԵԱՆ Բաց սրտի պէս բաց գիրք
81.- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
Անուրախ խորհրդածութիւններ
86.- Վ. ՍԱՐՏԻՐԵԱՆ
Շալկական պաշտամունքային
ձարտարապետութիւնը դարերու ընդմէջէն
98.- Թ. ԹՈՐՈՆԵԱՆ Մարտիրոս Սարեան,
Կոստան Զարեան, Պարոյր Սեւակ
103.- Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ Կոստան Զարեան
Եւ Վահան Նաւասարդեան. վերստին յաւելուած
105.- » Կոստան Զարեանի
նորայայտ նամակները Համաստեղին
113.- * * * «Այդ խլորդին հետ»
116.- ՀԱՍԱՍՏԵՂ Մեր սիրելի Գուրգէն
118.- * * * Փորձեցէք...
119.- Ս. ՎԱՐԳՆԵԱՆ
Երեք ժամ Համաստեղի հետ
126.- Մ. ՓԱՆՈՍԵԱՆ
Արտասովոր հաղորդակցութիւն
129.- » Դարցագրոյն
Դուրի շէքերձեանի հետ
137.- * * * Թիւրիմացութեամբ
Եւ մասամբ նորին
146.- * * * Սպասելով... «Շիրակ»ին
148.- * * * Նոյս տեսան
153.- * * * Սշակութային լուրեր

ՔՈԼԻՆ ՓԱՌԻԸ
ԱՆԳԱՐԱՅԻ ՄԵԶ



ԷՃԵԼԻՔ ԵՒ ՓԱՌԸ

ԱՆԳԱՐԱ, 5 (ՌՈՅԹԸՐԸ).- Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Ուաշինկթոն պիտի ուսումնասիրէ, թէ ի՞նչ կարելի է ընել Թուրքիոյ հետ առեւտրական արգելքները վերացնելու համար, յատկապէս ինչ կը վերաբերի հիւսուածեղէնի գոյութիւն ունեցող բաժնեչափերը:

Փաուլը կը խօսէր Անգարայի մէջ, ուր տեսակցութիւններ ունեցած է Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ ԷՃելիթի եւ այլ պաշտօնատարներու հետ՝ ահաբեկչութեան դէմ ամերիկեան գլխաւորութեամբ պատերազմին, Միջին Արեւելքի մէջ լարուածութեանց եւ Ուաշինկթոն - Թուրքիա առեւտրական յարաբերութեանց գծով:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմիլ հետ միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Փաուլը յայտնած է, թէ Թուրքիա շատ բան ունի ընելիք՝ իր տնտեսական դրութեան վերակառուցման համար, մինչ անկա կը փորձէ ինքնիշխան դուրս բերել տնտեսական խոր տագնապէն:

Անգարա ներկայիս Դրամական Միջապգային Ֆոնտին հետ բանակցութիւններու մէջ է՝ 19 միլիար տոլար փրկարար համաձայնութեան կողքէ յաւելեալ 10 միլիար տոլար ապահովելու համար:

Ճէմ նաեւ խօսած է երկու երկիրներուն միջեւ առեւտրական յարաբերութեանց բարելաւման համար ի գործ դրուած ճիգերուն մասին: Փաուլը Թուրքիոյ յայտնած է, թէ Ուաշինկթոն որոշում չէ կայացուցած Իրաքի նման երկիրներու դէմ քայլերու դիմելու համար՝ ահաբեկչութեան դէմ ամերիկեան պատերազմին նոր հանգրուանին:

ՄԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՍ

ՄԱՐԴԿԱՅԻՆ

ԻՐԱԻԱՆՅ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐ

ԱԶԱՏՕՐԷՆ ԿՐՆԱՆ ԱՅՅԵԼԵԼ

ԲԱՆՏԵՐԸ

ՏՈՒՊԱՅ, 5 (ՌՈՅԹԸՐԸ).- Մեծտական Արաբիոյ բանտերու ընդհանուր պատասխանատուն Չորեքշաբթի օր յայտարարեց, որ մարդկային իրաւանց միջապգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ ապատօրէն կրնան այցելել բանտերը, որոնց մասին յաճախ քննադատութիւններ կը կատարեն:

Գնդապետ Ալի Հիւսէյն Հարիսի ըսաւ, որ «Էմնըսթի Ինթըրնէշնըլ»-ի նախատեսուած այցելութիւնը յետաձգուեցաւ միջապգային կազմակերպութեան փափաքով՝ 11 Սեպտեմբերի դէպքերուն յոյսին տակ: Հատիսի աւելցուց, որ «Էմնըսթի» որեւէ տեւն կրնայ այցելել Մեծտական Արաբիոյ բանտերը, ուր պիտի հաստատէ, թէ մարդկային իրաւունքներու բռնաբարում չի կատարուիր: Հարիսի ըսաւ նաեւ, որ Մեծտական Արաբիա պահելիք բան մը չունի. հետեւաբար որեւէ կազմակերպութիւն կրնայ այցելութիւն մը կատարել:

«Էմնըսթի»-ի մէկ բանքերը ըսաւ, որ կազմակերպութիւնը գրեթէ տարիէ մը ի վեր կը սպասէ այցելութեան արտօնութիւն ստանալու: Լսելէ ետք, թէ արգելք մը չկայ, բանքերը ըսաւ, որ «Էմնըսթի» վերստին պիտի ներկայացնէ իր բանտերը այցելելու իր պահանջը:

Միջապգային կազմակերպութիւնը կ'ըսէ, որ սեղուտական բանտերը չափապանցուած կերպով խճողուած են եւ թէ բանտարկեալները չարչարանքներու կ'ենթարկուին:

«Էմնըսթի»-ի վերջին տեղեկագիրը կը նշէր, որ Մեծտական Արաբիոյ մէջ մարդկային իրաւունքները խախտուի կ'ենթարկուին, կիներու հանդէպ յատուկ խտրականութիւն մը կայ եւ թէ քաղաքական այլախոհներ կամայական կերպով կը ձերբակալուին, կը բանտարկուին ու խիստ պատիժներու կ'ենթարկուին՝ զրկուելով դատավարութենէ ու պաշտպանութեան իրաւունքէ:

ԻՐԱՆ

ՔԱՐԻԻՂԻ ՆԱԽԱՐԱՐ
ԸԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԿԱՆՉՈՒԻ

ՏՈՒՊԱՅ, 5 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանեան ատեան մը հարցաքննութեան հրաւիրած է քարիւղի նախարար Պիթան Ջանկանէն, զոր կ'ամբաստանուի պետական գանձէն դրամ իւրացնելու եւ իր պաշտօնին մէջ թերացումներ արձանագրած ըլլալու յանցանքով:

Ջանկանէի դէմ ուղղուած ամբաստանութեան մը հաւանականութիւնը հարուած մը կը նկատուի իրանի բարեկարգչական կառավարութեան դէմ:

Քարիւղի նախարարութեան մէկ աղբիւրը հաստատեց, որ Ջանկանէ հարցաքննութեան կանչուած է եւ ամբաստանութիւններ ուղղուած են անոր:

Աղբիւրը աւելցուց, որ ամբաստանութիւններէն մէկը կ'առնչուի քարիւղի արտադրութեան մարտաստածումներէ գոյացած ութ հարիւր միլիոն տոլար գումարի մը եւ երկ-

րորդը՝ «Փեթրոփարս» ընկերութեան վստահութեան ծրագրերը:

Անցեալ շաբաթ իրան երկիր վերադարձուց «Փեթրոփարս» ընկերութիւնը, որուն Հիմնադրութեան մէջ դերակատար եղած է Ջանկանէ, պետութեան յաւելեալ հակաշիւթի ենթակային համար գայն: «Փեթրոփարս» կիսասեփական ընկերութիւն մըն է: Պահպանողականները յաճախ քննադատեցին Ջանկանէն: Այս անգամ, սակայն հարցը պարզ քննադատութիւն մը չէ, այլ՝ դատական հետապնդում:

Նախագահ Մոհամէտ խաթեմի մօտիկ պաշտօնատարներ անընդունելի նկատեցին ամբաստանութիւնը, դիտել տալով, որ անկա քաղաքական դրդապատճառներ ունի: Կարգ մը մեկնաբաններ եւ քարիւղի արեւմուտքի մասնագէտներ եւս կ'ըսեն, թէ Ջանկանէի

դէմ ուղղուած ամբաստանութիւնները տեղին չեն: Անոնցմէ մէկը ըսաւ, որ իրանի մէջ քարիւղի նախարարը յաճախ իրաւունք չունի բանալի նկատուող որոշումներ տալու:

Պահպանողականներուն թիրախը միայն Ջանկանէն չէ: Կեդրոնական Դրամատան կառավարիչ Մոհամէտ Նուրպախը ալ քննադատութիւններու կ'ենթարկուի դրամական ազատական քաղաքականութիւն մը որդեգրած ըլլալուն համար:

Մեկնաբանները սակայն դիտել կու տան, որ Ջանկանէի ու Նուրպախի պարագային ալ պահպանողականները չօշափելի փաստեր չունին՝ հաստատելու համար իրենց ամբաստանութիւնները: Անոնք պարզապէս կ'ուզեն ներկայացնել նախագահ խաթեմին, որուն դաշնակիցները կը նկատուին Ջանկանէ եւ Նուրպախը:

ՌՈՒՄԻՈՅ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՔԱՐԻԻՂԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԵՐԸ
ԲԱՐԵԼԱՒՈՒՄ ԱՐԶԱՆԱԳՐԵՅԻՆ

ԼՈՆՏՈՆ, 5 (ՌՈՅԹԸՐԸ).- Քարիւղի միջապգային սակերը նկատելի բարելաւում մը արձանագրեցին Չորեքշաբթի օր՝ Ռուսիոյ որոշումին յոյսին տակ:

Ռուսիա որոշեց հինգ առ հարիւր կրճատումի ենթակել քարիւղի արտադրութեան ընդհանրացումը ՕՓԷ-Քի պահանջին: ՕՓԷ-Քի գլխաւոր անդամ Մեծտական Արաբիա ողջունեց Ռուսիոյ որոշումը, որուն շնորհիւ սակերը բարձրացան միջապգային շուկային վրայ:

Ռուսիոյ վարչապետ Միխայիլ ՔախաՆով Չորեքշաբթի առաւ հանդիպում մը ունեցաւ քարիւղի ընկերութիւններու ներկա-

յացուցիչներուն հետ, քննարկելու համար յաւելեալ կրճատումի կարելիութիւնները: Ռուսական ընկերութիւնները յայտնած են, որ կարելի է օրական 150 հազար տակառի կրճատում մը կատարել Յունուար 1էն սկսեալ: Ռուսիա նախապէս պատրաստակամութիւն յայտնած էր օրական յիսուն հազար տակառ կրճատել միայն: ՕՓԷ-Ք անընդունելի նկատած էր Մոսկուայի որոշումը, պահանջելով որ աւելի մեծ քանակութեամբ կրճատում կատարէ, եթէ կ'ուզէ բարձրացնել քարիւղի սակերը: ՕՓԷ-Ք պատրաստ է օրական 1,5 միլիոն

տակառ կրճատելու, պայմանաւ որ քարիւղ արտածող անկախ երկիրները մօտաւորապէս կէս միլիոն տակառ կրճատելու պատրաստակամութիւն յայտնեն, որպէսզի կարելի ըլլայ յաւելեալ անկումէ փրկել սակերը: Մեքսիքա եւ Պարվելիա պատրաստակամութիւն յայտնած են հարիւր հազարէն երկու հարիւր հազար տակառի կրճատում կատարել: Ռուսիոյ կողքին, եթէ այլ երկիրներ ալ կրճատեն, հաւանաբար կարելի պիտի ըլլայ հասնիլ ՕՓԷ-Քի պահանջած հինգ հարիւր հազար տակառի թիրախին:

ՓՈՒԹԻՆ ԱՅՍՕՐ

ՅՈՒՆԱՍԱՆ ԿԸ ՄԵԿՆԻ

ՄՈՍԿՈՒԱ, 5 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Հինգշաբթի օր (այսօր) Յունաստան այցելութիւն մը պիտի տայ: Ան Չորեքշաբթի օր կայացած հարցապրոյցի մը մէջ շեշտած է, որ թէ՛ ՕՓԱՆԻ եւ թէ՛ Ե. Միութեան հետ աւելի սերտ յարաբերութիւններ կ'ուզէ աշխարհի ապահովութեան սպառնացող վտանգներուն հակադարձելու համար:

Փութինի տեսակցութեանց օրակարգի նիւթերն պիտի ըլլան առեւտրական յարաբերութիւնները եւ Պուլկարիա - Յունաստան քարիւղատար խողովակի մը կառուցումը, ինչպէս նաեւ ապահովութեան վերաբերեալ հարցեր:

ԸԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՐՍՏՈՒՄԱՅՄԱՆ 1700ԱՄԵԱԿԻ ԵՒ
ՆԱԸՏԱԿ ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐԶ. ՄԱԼՈՅԵԱՆԻ
ԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՒՐԱԽԱԼԻ ՉՈՅՁ ԱՌԹՆԵՐՈԿ
ԵՐԳՉԱԽՄԱՅՅԻՆ ՀԱՄԵՐԳ

Հովանաւորութեամբ՝
ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵԶԱՆԻԿ
ՏԷՐ ՆԵՐՄԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԺ.

Կաթողիկոս - Պատրիարք Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Դպրոց
Կատարողութեամբ՝

ԸԱՅ. ԿԱԹ. «ԿՈՌԻՆԱ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ
Ղեկավարութեամբ՝
ԵՐԱԺԵՏԱԳԵՏ ԵՂՈՒԱՐԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2001, Երեկոյան Ժամը
7:00ին, Զալքայի Ս. Խաչ Եկեղեցւոյ «Պետողլեան»
սրահին մէջ:

ԵՐԱԽՐ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վաճարումին հետ միաժամանակ ներկայացուցէ **FUEL CARD-ը**, այս ձեռով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅԸԻԼԻ գրասենեակ, Պուրճ Ըամուտ
- Շամագգայինի գրախանութ, Պուրճ Ըամուտ
- Գրատուն Caravelle, Զալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

ՔԱՐԸ ԿԸ ՍՏԱՆԱԶ ԶՐԻՕՐԵՆ

ՄՐԺԷՔԱՌ ՆՈՒԵՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՅՈՒՄՈՒՄ

3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹԱՏԵՐԱԿՈՒՄԲԸ՝ «ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀ» ՓԱՌԱՏՕՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Իրանի խոլիստան նահանգի Շուշ քաղաքին մեջ տեղի ունեցած «Իրան զամին» («Պարսից աշխարհ») երրորդ միջազգային բաժնեկական փառատոնի զլխաւոր մրցանակին արժանացած է Սօս Սարգսեանի ղեկավարած Համազգայինի քատրոնը, որ փառատոնին մասնակցած է Դաւիթ Յակոբեանի բեմադրած «Գուցէ փրկուենք» ներկայացումով:

Համազգայինի քատրոնը փառատոնին մասնակցող 17 բաժնեկական թատերերէն միակ քրիստոնեայ երկրի ներկայացուցիչը եղած է: Միւս խումբերը ներկայացուցած են Իրանի տարբեր նահանգները, Տաճիկիստանը, Իրաքն ու Ազըրպէյճանը:

Իրանական մամուլը դրուատիրով արտայայտուած է հայկական թատերախումբին մասին՝ բարձր գնահատելով անոր խաղաոնը, բեմադրութիւնը, ներկայացման բովանդակութիւնը եւ դերակատարները:

ՀԱՅ ԲԵՄԱԴՐԻՉԻ ՄԸ ԺԱՊԱՒԵՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԵՐՈՒ

«Երեւան» շարժապատկերի սթիւտիոյի տնօրէն բեմադրիչ Տիգրան իմալեանի «Փիւրիքին» կամ օդից թիւն» ժապաւնը վերջին շաբաթներուն մասնակցած է շարժապատկերի միջազգային երկու փառատոններու: 2000 թուականին «Երեւան» սթիւտիոյին նկարահանած այդ ժապաւնը Պոլսոյ մէջ կազմակերպուած փառատոնի մը արժանացած է դատական կազմի յատուկ մրցանակին, իսկ անկէ քանի մը օր ետք Պիւրիքինի մայրաքաղաքին մէջ կազմակերպուած «Լիսթափատա 2001» փառատոնին ստացած է «Շարժապատկերի մոգուս» մրցանակը:

Տ. իմալեան նշած է, որ ժապաւնը Պոլսոյ տարեկան փառատոնին մասնակցած է թրքական կողմին հրաւերով: Փառատոնին ներկայացուած են 36 երկիրներու (գլխաւորաբար եւրոպական) 120 ժապաւնէններ: Իսկ Միւսի տարեկան փառատոնը տեղի ունեցած է ԱՊՀ-ի եւ Պալմիրայի երկրներու մասնակցութեամբ, 8 երկիրներէ 16 ժապաւնէններ ցուցադրուած են, որոնցմէ 9 հատը ներկայացուցած է Ռուսիան: Անոնց շարքին եղած է նաեւ բեմադրիչ Տիգրան Քէօսայեանի նկարահանած «Ժապաւնէն»:

ԵՐԵՒԱՆ ՀԱՆՐԱԿԱՌՔԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱԴՐԵՑՈՒԻ

Հայրենի «Ազգ» թերթը կը հաղորդէ, թէ Երեւանի քաղաքապետ Ռուպիկ Նազարեան որոշում մը ստորագրած է 1 Դեկտեմբերին Երեւանի կարգ մը հանրակառքերու սպասարկումը դադարեցնելու մասին: Այս որոշումը կը հիմնաւորուի հանրակառքերու անարդիւնաւէտ աշխատանքով, որուն պատճառով կ'աճին «Ելեկտրաբարձար» ընկերութեան սպառած էլեկտրականութեան հոսանքին դիմաց ունեցած պարտքերը:

Հանրակառքերու աշխատանքին դադարեցման պատճառներէն մէկն է նաեւ Երեւանի խանութներ փողոցի հանրակառքի գիծերու վերաբացումը:

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՆՇՈՒՄ

3 Դեկտեմբերին կը նշուի հաշմանդամ երեխաներու օրը: Այս առիթով Երեւանի Պուլիկին անուան դպրոցին մէջ տեղի ունեցաւ յատուկ (յենասայկաւոր, թոյլ լսող, խուլ ու համր, կոյրերու) եւ սովորական հանրակրթական դպրոցներու աշակերտներու միացեալ համերգը, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ:

Հանդիսութեան բացումը կատարելով՝ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան փոխ նախարար Այտա Թոփուզեան նշեց, որ ներկայիս աշխարհի բնակչութեան շուրջ 10 առ հարիւրը հաշմանդամ է, իսկ մէկ չորրորդը այս կամ այն ձեւով կ'առնչուի հաշմանդամութեան: Հայաստանի մէջ արձանագրուած է շուրջ 108 հազար հաշմանդամ, որմէ 8500ը՝ մինչեւ 16 տարեկան երեխաներ:

Այտա Թոփուզեանի համաձայն, ներկայիս փոխուած է վերաբերմունքը ֆիզիքական թերութիւն ունեցող երեխաներուն նկատմամբ:

Հայաստանի մէջ ներկայիս կը գործեն 32 յատուկ դպրոցներ: Երեւանի 6 մանկապարտէզներու մէջ առողջ երեխաներու հետ կը յաճախեն նաեւ ֆիզիքական թերութիւն ունեցող երեխաներ: Նոյն սկզբունքով կը գործեն նաեւ քանի մը ուրիշ դպրոցներ: «Համապատկերները պէտք է պատրաստ ըլլայ ընդունելու այդ երեխաները այնպէս, ինչպէս որ են՝ առանց որեւէ խտրականութեան», ընդգծեց Ա. Թոփուզեան:

www.homenetmencentral.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԻՏԱՅՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԱՃ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Արեւելեան Եւրոպայի եւ նախկին խորհրդային հանրապետութիւններուն մէջ, ներառեալ՝ Հայաստան, կ'արձանագրուի էյժ. Այ. Վի. Ժահրով վարակուած պարագաներուն աճէնէն մեծ համեմատութիւնը: ՄիՏԱ-ի կանխարգիւծման Ազգային Կեդրոնի տնօրէն Սամուէլ Գրիգորեան ըսած է, թէ Հայաստանի մէջ արձանագրուած է էյժ. Այ. Վի. Ժահրով վարակուած 169 պարագայ, որոնց 130ը տղամարդ է, 36ը՝ կին: Իսկ 3ը՝ երեխայ: Անոնցմէ 29 հոգին ՄիՏԱ-է կը տառապի: Վարակուածներուն միջին տարիքը 20-39ի միջեւ է: Սակայն պէտք է նշել, որ Հայաստանի մէջ ՄիՏԱ-յով վարակուածներուն իսկական թիւը արձանագրուած պաշտօնական տուեալներէն 10-15 անգամ աւելի է, այսինքն՝ Հայաստանի մէջ կայ էյժ. Այ. Վի. Ժահրով վարակուած 1500-2000 հոգի:

Այս տարի Հայաստանի մէջ արձանագրուած է ՄիՏԱ-ի վարակուած երեխայի մը մահուան առաջին դէպքը:

Հայաստանի մէջ էյժ. Այ. Վի. Ժահրով կը փոխանցուի հիմնականին մէջ թմրեցուցիչներու օգտագործման (46,7 %) եւ սեռային յարաբերութիւններու (40,8 %) միջոցով: Ըստ արձանագրութիւններուն, վերջին տարիներուն զգալի կերպով աճած է թմրեցուցիչներու օգտագործման միջոցով վարակման դէպքերը:

«Արմինֆօ» կ'աւելցնէ, թէ մօտիկ ապագային Հայաստանի կառավարութիւնը 2002-2006 տարիներուն համար պիտի որդեգրէ էյժ. Այ. Վի. / ՄիՏԱ-ի կանխարգիւծման ազգային ծրագիր մը, որ արդէն իսկ որդեգրուած է հանրապետութեան 15 տարբեր նախարարութիւններու եւ պետական բաժանմունքներու կողմէ: Կը նախատեսուի, որ ծրագիրը ֆինանսաւորուի կառավարութեան եւ նուիրատու կազմակերպութիւններու կողմէ:

Դեկտեմբեր 1ին լիշտակաւորող ՄիՏԱ-ի Համաշխարհային օրը նշելու եւ այս հիւանդութեան մասին Հայաստանի բնակչութեան զիտակցութիւնը զարգացնելու նպատակով 3 Դեկտեմբերին Հայաստանի ՄԱԿի կեդրոնաւորին մէջ տեղի ունեցած է էյժ. Այ. Վի. - ՄիՏԱ-ի մասին կլոր սեղան մը, որուն ներկայ գտնուած են Հայաստանի մէջ ՄԱԿի եւ այլ կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները: Նշենք, որ ՄԱԿի Բարգաւաճման Ծրագիրը (Նու. Էճ. Տի. Փի.) ջանքերուն շնորհիւ 1997էն ի վեր կարելի եղած է Հայաստանի մէջ հիմնել էյժ. Այ. Վի. - ՄիՏԱ-ի Դէմ Ազգային Ռազմավարութեան Ծրագիրը:

●Միւս կողմէ, «Արմինֆօ» կը տեղեկացնէ, թէ «Արմենիքում» իրականութեամբ, ըստ երեւոյթին, նոր հիւանդներ չի ներգրաւեր: Ներկայիս «Արմենիքում» ի դարմանատունը հիւանդ չունի: Նշենք, որ այս դարմանատան տեղեկութիւններուն համաձայն, 18 երկիրներէ 250 հիւանդներ փորձառական բուժումներ ստացած են «Արմենիքում»ով: Հայաստանի առողջապահութեան նախարար Հայկ Դարբինեան «Արմինֆօ»-ին յայտնած է, թէ դարմանատունը ներկայիս կը շարունակէ բուժել նախապէս դարմանուող հիւանդները, սակայն ան չէ բացատրած, թէ դարմանատունը ինչո՞ւ գրեթէ պարապ է:

ՆԱԶԱՐԵՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԶՐԻՍՏՈՆԵԱՅ ԿՐՕՆԱԻՐՆԵՐԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒ ԲՈՂՈՔԵՆ ՄԶԿԻԹԻՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԴԷՄ

Իսրայէլի մէջ քրիստոնեայ եկեղեցիներուն պետերը կառավարութիւնը մամբաստանած են Նազարէթ քաղաքին՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան աւետիսը կատարուած վայրին մէջ մզկիթ մը կառուցելու դէմ եղած համաշխարհային եկեղեցական բողոքները անտեսելու յանձնարարով:

Երուսաղէմի 13 գլխաւոր եկեղեցիներուն հոգեւոր պետերը, որոնց շարքին՝ երուսաղէմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկեան, նոր բողոքագիր մը եւս յղած են կառավարութեան:

Այս ծրագիրը արդէն իսկ լարուածութիւն յառաջացուցած է քրիստոնեայ եւ իսլամ արաբներուն միջեւ: Այս հարցին մասին Վատիկան ըսած է, թէ այս հարցին պատճառով «այս սուրբ վայրը պիտի գետեղուի մնայուն պաշարման մէջ»: Նշենք, որ նախապէս Յովհաննէս Պօղոս Բ. պապը այս պատճառով սպառնացած էր քննել ղեկի Սուրբ Հոգիներ հազարամեակի իր այցելութիւնը:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄՆ 5:00:

ՄԱՀԱԶԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան աւտեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԿՐԸՆՈՊԼ Հ. Յ. Դ. 111ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 18 Նոյեմբեր 2001ին, Կրքնոպլի շրջանի հայութիւնը մեծ շուքով մը Հ. Յ. Դ. 111աւանդը, շրջանի «Եօթնըպայթեան» խումբի կազմակերպութեամբ:

Ձեռնարկին սկիզբը Հ. Յ. Դ. պատանհաններու խումբին կատարողութեամբ ներկայացուցանուցին «Մեր Հայրենիք»ը, որմէ ետք խօսք առաւ շրջանի Հ. Յ. Դ. ներկայացուցիչ ընկ. Գրիգոր Գոյունցեան: Ան ամփոփ պատմական կատարեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայրենիքի եւ Սփիւռքի տաճարակներու գործունէութեան եւ ներկայացուց օրւան բանախօս՝ Հայ Դատի Յանձնախումբի ատենակալ Յարութ Մարտիրոսեանը:

Այնուհետեւ շուք ծամ մը տեւողութեամբ, ազգային-յեղափոխական եւ հայրենասիրական երգերով մթնոլորտը ճոխացուց «Սպիտակ»

նուագախումբը: Ապա բեմ հրաւիրուեցաւ Յ. Մարտիրոսեան: Ան անդրադարձաւ 1987ին Եւրոպական խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ 24 Հոկտեմբեր 2001ին Թուրքիոյ ի նպաստ որդեգրուած բանաձեւերուն, յայտարարեց, թէ անոնք որոնք այսօր կ'ընդդիմանան հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն վերականգնման գործընթացին, պէտք է դասեր քաղեն պատմութեանէն եւ անյայաղ դատապարտեն Թուրքիոյ կեցուածքը, երկիր մը, որ կ'ոտնակոխէ մարդկային տարրական իրաւունքները, գրաւուած կը պահէ այլ երկիրներու տարածքները եւ կ'որսանայ հայ ժողովուրդի նկատմամբ գործադրուած ցեղասպանութիւնը:

Հանդիսութեան պաշտօնական բաժնի անարտիք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ մշակոյթի տան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒԺԱՆԻԹԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԱՐՄԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Երեքշաբթի, 4 Դեկտեմբերին, Հայաստանի նախագահ Ռ. Քոչարեան յատուկ հրամանագիրով մը Հայաստանի ուժանիւթի նախարար նշանակած է Արմէն Մովսիսեանը, նախապէս այլ հրամանագիրով նախարարական նոյն պաշտօնէն արձակելով Կարէն Գալստեանին:

Միւս կողմէ, Հայաստանի վարչապետ Ա. Մարգարեանի որոշումով, Ալեքսանտր Աւետիսեան նշանակուած է Հայաստանի կառավարութեան աշխատակազմի արտաքին կապերու վարչութեան պետ: Մինչեւ նոր նշանակումը, Աւետիսեան կը վարէր նոյն վարչութեան փոխ նախագահի պաշտօնը:

ԿԻՆԵՐՈՒ ԴԷՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԻՆՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 4 Դեկտեմբերին, Կիներու Իրաւունքներու Կենտրոն կազմակերպութեան նախագահ Սուսաննա Վարդանեան տուած է մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտնած է, որ կազմակերպութեան կողմէ պատրաստուած հարցաթերթիկին ընդառաջող 1200 կիներու պատասխաններէն ի յայտ եկած է, որ Հայաստանի մէջ կիներու նկատմամբ առաւելաբար հոգեբանական բռնութիւն է որ կը կիրարկուի (45,7%), որուն կը յաջորդեն ֆիզիքական բռնութիւնը, սեռային հետապնդումները եւ սեռային բռնութիւնը: «Մարգարեան մէջ հոգեբանական բռնութիւնն է գերիշխողը, իսկ Երեւանի մէջ՝ ֆիզիքականը», դիտել տուած է Ս. Վարդանեան:

Կազմակերպութիւնը ցարդ հրատարակած է «Ընտանեկան բռնութիւնը Հայաստանի մէջ», «Խուսափի՛ր որդալքերէն»-«Որքա՞ն դիմել օգնութեան համար» եւ նման խորագիրներով գիրքեր, ուր հերքուած են սեռային բռնութեան մասին Հայաստանի օրէնքները եւ ցանկը այն պետական հաստատութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնց կրնայ դիմել ենթական՝ օգնութեան խնդրանքով:

Սուսաննա Վարդանեան նաեւ յայտնած է, որ Կեդրոնը 2002ի իր աշխատանքները պիտի սկսի Սեւանի մէջ կազմակերպուելիք երկօրեայ սեմինարով, որ պիտի կրէ «Վերադարձողականութեան իրաւունք եւ առողջութիւն» խորագիրը: Ս. Վարդանեան եզրակացուցած է ընելով, որ յառաջիկայ տարուան բոլոր ձեռնարկներուն առանձնապատկութիւնը պիտի ըլլայ այն, որ կիներու կողքին նաեւ աշխատանքներ կատարուին նաեւ տղամարդոց հետ եւ անոնց ներկայութեամբ:

PARAFOUDRE PARATONNERRE

Plus de performance pour plus de sécurité

PSR
Made in Spain

NOS RÉFÉRENCES:
IBM - ATT - GENERAL ELECTRIC - XEROX - ALCATEL
SHELL - GENERAL MOTORS - REPSOL

Agent Exclusif:
G. AYANIAN & SONS
Dora: 01-255222
Gemmayzé: 01-447000

Հրամանատար Գրառու

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՀԵՏԵՒԻ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Լաւատեղեակ աղբիւր մը հաստատեց, որ Լիբանանն ըստական մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի պաղեստինեան հողերուն վրայ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ «Համաս» շարժումին կողմէ Երուսաղէմի եւ Հայֆայի մէջ գործադրուած անձնասպանական յարձակումներուն դէմ իսրայէլի հաւանական հակազդեցութեան:

Լիբանանի արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ զօրաշարժի ենթարկած է կարգ մը մեծ պետութիւններու մէջ գտնուող լիբանանեան ղեկավարներուն հետ: Իսրայէլի զօրաւորութիւններու մէջ գտնուող լիբանանեան ղեկավարներուն հետ հարաբերութիւնները համար, ինչպէս նաեւ զրոյց մը ունեցած է Յորդանանի արտաքին գործոց նախարար Ապտալա իսթիպի հետ: զրոյցը կեդրոնացած է ստեղծուած արտակարգ դրութեան եւ անոր դէմ կեցողութեան վրայ: Խաթիպ խոստացած է

վերստին կապ հաստատել Համմուտի հետ յորդանանեակաբար պատկան արտակարգ վեհաժողովէն ետք, իրեն տեղեակ պահելու համար տեղի ունեցած բանակցութիւններուն արդիւնքներէն:

Աղբիւրը կը նկատէ, որ ամերիկացի պատուիրակները ղեկավար Ուիլիամ Պրոքթի դիւանագիտական եւ զօր. Անթոնի Ջիմիի առաքելութիւնները ձախողութեան դատապարտուած են, մանաւանդ երբ ինթիֆա տայի հօգրագոյն թեւը: «Համաս» փաստեց, որ ինք կրնայ իր հարուածը հասցնել Երուսաղէմի եւ Հայֆայի սրտին մէջ:

Աղբիւրը յայտնեց, թէ պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եսսէր Արաֆատ ամերիկեան եւ եւրոպական ճնշման տակ հրահանգեց կարգ մը դիմադրողներու ձերբակալութիւնը: Սակայն, ասիկա բաւարար չէ Ուաշինկթոնի եւ անոր եւրոպացի դաշնակիցներուն համար, որով-

հետեւ պահանջուածը չբաւարարուիր է անոնց ձերբակալութեամբ, այլ անոնց դատապարտութեան ենթարկելը: Ասիկա կ'ենթադրէ ժամանակ, որ իսրայէլի պիտի չարգիլէ իր հարուածը հասցնելէ:

Աղբիւրը աւելցուց. «Ջիմիի առաքելութիւնը որեւէ խօսք սկսած է անիմաստ դառնալ քաղաքական եւ ապահովական բաւարարութիւններու մէջ, իսկ արաբեկիստայէլեան բանակցութիւններու վերսկսման մասին խօսքերը դարձած են երեւակայութեան արգասիքներ» պայմաններու արմատական փոփոխութեան է իսրայէլի կողմէ զինուորական ուժին դիմելէ ետք, երեւոյթ մը, որուն դէմ անպայման ի յայտ պիտի գայ արաբական հակազդեցութիւնը:

ԽԱԼԻԼ ՖԵԼՅԱՆ
«Նախար»

ՊԱԱԼՊԵՔ - ԵՐՄԵԼԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅՈՒՅԱՐԵՐԵ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՍԱՐ

ՀԱՇԻՇԻ ՑԱՆՔԵՐԸ ՊԻՏԻ ՈԶՆՉԱՑՈՒՄ

Պաալպէք - Հերմէլի երեսփոխաններուն եւ լիբանանեան ու սուրիական ապահովական ուժերու պատասխանատուներուն Պեքալի աշխրէթներու պետներուն եւ Պաալպէքի անձնակազմին թմրեցուցիչի ցանքերը ոչնչացնելու որոշումին, որ պիտի իրագործուի առանց որեւէ արգելքի դիմադրուելու շրջանի բնակչութեան կողմէ, պայմանով սակայն, որ պետութիւնը իրագործէ Պաալպէք - Հերմէլի շրջաններու բարգաւաճման իր խոստումները, մանաւանդ որ կարգ մը երկրագործներու կողմէ արգիլուած բոյսեր ցանելու երեւոյթը սկսաւ անոր կենալէն 5 տարիներ ետք՝ իրրեւ հետեւանք շրջանի ժողովուրդի տնտեսական տագնապին եւ լիբանանեան պետութեան կողմէ տրուած խոստումներու անտեսման:

Միեւնոյն ժամանակ լիբանանեան կառավարութիւնը բաւարար կերպով ճնշում չբանեցուց միջազգային կազմակեր-

պութիւններուն վրայ՝ Պեքալի մէջ ալլընտրանքային մշակութիւններ ցանելու իրագործումը ապահովելու համար, մինչ թուրքիա եւ Մարոք մեծ գումարներ կը ստանան միջազգային կազմակերպութիւններէ՝ ձերբազատելու համար ալլըպիսի ցանքերէ:

Տեղեկութիւններ կան, որ հաշիշի ցանքերու փճացումը պիտի սկսի 25 Դեկտեմբերին: Աղբիւրները նաեւ կը յայտնեն, որ ներքին գործոց նախարարի հաշիշի ցանքերը ոչնչացնելու որոշումին իրագործման որեւէ ընդգիծութիւն պիտի «ճնշուի»: Անոնք նաեւ կը յայտնեն, թէ օրինազանցները պատասխանա-

տուութեան պիտի կձնչուին, որոշումը պիտի իրագործուի, եւ անոր իրագործման ճամբուն վրայ որեւէ արգելք պիտի չըլլայ, մանաւանդ Պաալպէք - Հերմէլի ժողովուրդին այս հարցին նկատմամբ ունեցած բարձր գիտակցութեան եւ ցուցաբերած հասկացողութեան լոյսին տակ, զոր արտայայտեցին շրջանի երեւելի դէմքերը՝ շրջանի երեսփոխաններուն նաեւ կը յայտնեն, քայլին գիւղական արտադրութեան կազմակերպումը յաջողեցնելու հարցը:

ՈՒՍՏՈՒՄՆ ԶԻՊ
«Տիար»

ՍԻՏԱՅԻ ՀԱՄԱԶԽԱՐԱՅԻՆ ՕՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՍԻՏԱՅՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ 31 ԱՌՀԱՐԻՐԻՆ ՏԱՐԻՔԸ ԿԸ ՏԱՏԱՆԻ 31ԷՆ 40Ի ՄԻՋԵԻ

Ըստ Լիբանանի մէջ ՍԻՏԱյի դէմ պայքարի ազգային ծրագրի հրապարակած վիճակագրական տուեաններուն, մինչեւ 2000 թուականի վերջը Լիբանանի մէջ արձանագրուած է Էյ. Այ. Վի.ով վարակուածներու 613 պարագայ:

Այս պարագաներուն 276ը ՍԻՏԱով վարակուած են, 199ը՝ Էյ. Այ. Վի.ով, իսկ 138 այլ անձերու պարագան տակաւին չէ յստակացած: Հիւանդներուն 78,5 առ հարիւրը այրեր են, 20,9 առ հարիւրը կիներ, իսկ 7 առ հարիւրին ինքնութիւնը անորոշ է:

Վիճակագրական թուային պատկերին համաձայն, ՍԻՏԱով վարակուածներուն 12,9 առ հարիւրին տարիքը կը տատանի 15էն 24ի միջեւ. այս թիւը 1995ին արձանագրուած տուեաններէն չորս անգամ աւելի է: Այս տարիքներուն ՍԻՏԱով վարակուողներուն 63,9 առ հարիւրը հիւանդութիւնը ստացած է սեռային յարաբերութիւններու ճամբով: Ցայտեմբ, թէ Լիբանանի մէջ սեռային յարաբերութիւններու սկսելու արտօնեալ տարիքը 15 է: Սեռային յարաբերութիւններու ճամբով ՍԻՏԱով վարակուածները կը կազմեն ՍԻՏԱ ունեցողներուն 69,5 առ հարիւրը: Վարակուածներուն 33,4 առ հարիւրը սեռային յարաբերութիւններ ունեցած է մէկէ աւելի անձերու հետ, իսկ այրերուն 10,6 առ հարիւրը ունեցած է 4է աւելի ընկերակից: ՍԻՏԱ ունեցողներուն 50 առ հարիւրը սեռային յարաբերութիւններ կ'ունենայ ոեւէ անձի հետ, 29 առ հարիւրը դրամ կը վճարէ յարաբերութեան համար, իսկ ասոնց 76,1 առ հարիւրը պահանջներ չի գործածեր:

ՊԵՐՈՒԹԻ ԹԱՂԵՐԸ ԼԵՅՈՒԱԾ ԵՆ ՄՈՒՐԱՅԿԱՆ ՆԵՐՈՎ ԵՒ ԱՂԲԻՆ ՄԷՋ ԻՐԵՆՅ ԿՐՈՒՄՏԸ ՓՆՏՈՒՂՆԵՐՈՎ

Մուրացկանութեան եւ աղբերու մէջ պրպտումներ կատարողներուն հարցին նորութիւնը այն է, որ ոչ մէկ փոփոխութիւն կայ այդ գծով:

Թէ՛ փոքր եւ թէ՛ չափահաս մուրացկանները մաս կը կազմեն մայրաքաղաքի համապատկերին: Անոնք կը դեգերին մայրաքաղաքի փողոցներուն մէջ, կը ցատկեն ինքնաշարժներուն դիմաց, ապակիները կը ծեծեն, կու լան եւ կ'ողբան: Վարորդները կամ կ'ընդառաջեն անոնց խնդրանքներուն եւ կամ անարգական խօսքեր կ'արտասանեն եւ կը հայհոյեն:

Ներքին գործոց նախարարութիւնը խոստացած է այս մուրացկաններու վիճակին լուծում մը գտնել, սակայն երկար ժամանակ անցած է այդ խոստումէն, բայց ոչ մէկ քայլ առնուած է այդ ուղղութեամբ:

Այդ մուրացկաններու հարցին լուծում մը գտնելու միտումով Պէյրութի քաղաքապետարանը, ներքին գործոց նախարարութեան խնդրանքով, այս առնչութեամբ առաջարկներու նամակ մը ներկայացուցած է:

Պէյրութի քաղաքապետարանի անդամ տոքթ. Մոհամէտ ինչը Քատի «Անուար» օրաթերթի թղթակիցին խօսած է այս նամակին բովանդակութեան մասին:

Ան ըսած է, թէ վերջին շրջանին Պէյրութի մէջ շատ մեծ տոկոսով աւելցած է մուրացկաններուն եւ մարմնական թերութիւններ ունենալ ձեւացնող անձերուն թիւը: Մոհամէտ ինչը Քատի նշած է, թէ անոնց ետեւք ամէն վայրկեան վտանգի մէջ է, որովհետեւ անոնք միշտ կը թափառին մայրուղիներուն եւ ճամբաներուն մէջտեղերը՝ ինքնաշարժներուն ընդմէջէն, եւ անպասելիօրէն կը յայտնուին քաղաքի ինքնաշարժներուն առջեւ: Ըստ քաղաքապետարանի անդամին, անոնք նաեւ կ'աղաւղեն քաղաքին ընդհանուր պատկերը: Ասոր կողքին անոնք նաեւ կը վնասեն քաղաքի բնակիչներուն՝ ընկերային առումով, որովհետեւ անոնք անպատշաճ եւ կոշտ արտայայտութիւններ կ'ուղղեն այն անձերուն, որոնք իրենց դրամ չեն տար:

Մոհամէտ ինչը Քատի ըսած է, թէ մուրացկանները պատերով կու գան եւ կ'իջնեն որոշ վայրի մէջ: Իրիկունը նոյն պատերը կու գան եւ իրենց կեղրոնները կը վերադարձնեն բոլոր կամ մնացած մուրացկանները:

Ան աւելցուցած է, թէ կ'ուզենք Լիբանանը ներկայացնել իրրեւ քաղաքակրթութեան եւ յառաջդիմական երկիր եւ զարկ տալ անոր զբօսաշրջութեան, սակայն



այսպիսի երեւոյթները հակառակ ազդեցութիւն ունին եւ կը ձախողեցնեն կառավարութեան փորձերը առեւտուրի, արհեստներու եւ զբօսաշրջութեան բնագաւառներու զարգացման մէջ:

Մուրացկանութեան կողքին կան նաեւ այն թափառաշրջիկները, որոնք աղբերուն մէջ կը մտնեն եւ ապակի, թուղթ, երկաթ եւ այլն կը փնտնեն, որպէսզի այդ նիւթը յատուկ ընկերութիւններու ծախեն:



Հաշմանդամ մը՝ ինքնաշարժներուն միջեւ:

Մոհամէտ ինչը Քատի այս երեւոյթը նկատած է մնայուն աղէտ, որ տարածուած է ամէն տեղ՝ փոքր թաղերու, մայր ճամբաներու եւ հանրային կեղրոններու մէջ: Ան նշած է, թէ աղբը խառնողները իրենց միջավայրին մեծ եւ ահաւոր վնաս կը հասցնեն, անոնք կը բանան զոց տոպրակները անկէ դուրս կը նետեն աղբերը եւ ամէնուրեք աղտոտ վիճակ ստեղծելով աւելի եւս կ'ապականեն արդէն իսկ ապականած միջոցաւ:


Մոհամէտ ինչը Քատի ներկայացուցած է նաեւ այն առաջարկները եւ ծրագրերը, որոնք կը մշակուին այս հարցին լուծում մը գտնելու համար: Ըստ անոր, կառավարութիւնը պէտք է քայլերու դիմէ այս անքաղաքակրթ երեւոյթները վերացնելու համար: Ընկերային հարցերու նախարարութիւնը պէտք է յատուկ ապաստարաններ ապահովէ մուրացկաններուն՝ ըլլան անոնք լիբանանցի, թէ օտար, որովհետեւ այս հարցը առկայ է հանրապետութեան սահմաններուն մէջ եւ հոս ապրող բոլոր անհատները ենթակայ են կառավարութեան տնօրինած օրէնքներուն: Օտար մուրացկաններուն պարագային կարելի է նաեւ զանոնք ուղարկել իրենց երկիրները: Ան նշած է, թէ քանի մը տարի առաջ կառավարութիւնը փորձեց գործնականացնել այս ծրագիրը, սակայն չյաջողեցաւ: Զբօսաշրջութեան նախարարութիւնը եւս պէտք է որոշ միջոցառումներու դիմէ, որովհետեւ ինք եւս կապ ունի այս հարցին. մուրացկաններու պարագան Լիբանանի պատկերը աղաւաղելու կողքին նաեւ ժխտական է զբօսաշրջիկներուն համար, որովհետեւ անոնք կը քաշեն օտարներուն հագուստներէն, գանազան անպատշաճ խօսքեր կ'արտասանեն եւ այս կրնայ ըլլալ պատճառներէն մէկը, որ զբօսաշրջիկները անգամ մը եւս չմտածեն Լիբանան գալու մասին: Կրթութեան նախարարութիւնը իր կարգին պէտք է ձրի եւ ստիպողական կերպով դպրոց ուղարկէ այս մուրացկանները, որպէսզի գանոնք դնէ կեանքի ճիշդ ճամբուն վրայ: Մեծ պատասխանատուութիւն ունին նաեւ ծնողները, որոնք կը մղեն իրենց զաւակները մուրացկանութեան եւ ճիշդ ձեւով չեն դաստիարակեր գանոնք:

Մոհամէտ ինչը Քատի ներկայացուցած է նաեւ աղբի տակառներուն մէջէն օգտագործելի իրեր փնտնողներուն գծով մշակուած լուծումները եւ ըսած է, թէ անոնք աղբէն կ'առնեն այն առարկաները, որոնք կարելի է վերստին մշակել եւ գործածել:

ՀԱՄԱ ՊՈՒԹՐՈՍ
«Անուար»

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրապարակել փափաքողները կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային)՝ միայն ըստաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) Գերկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:



Կնոջական

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԶ

Ո՞Ր ՏԱՐԻՔԻՆ ԵՏՔ ԵՐԵԽԱՅ ՄԸ ԱՌԱՆՁԻՆ ՓՈՂՈՑԸ ԿԸ ԶԳՈՒԻ

Բոլոր մասնագետները համակարծիք են, որ 8 տարեկանին առաջ երեխայ մը միայն չափահասի մը ընկերակցութեամբ կրնայ փողոց իջնել:

8 տարեկանին առաջ երեխային բոլոր զգայաւորանքները կատարելապէս չեն գործեր, անոր հասակը եւս չ'օգներ, որ ան իր շուրջը լաւ տեսնէ, ոչ ալ ան կրնայ ճիշդ ձեւով հեռաւորութիւնները չափել, նաեւ փորձառուութեան պակասը պատճառ կ'ըլլայ, որ ան արկածներու հանդիպի:

ԼՍՈՂՈՒԹԻՒՆԸ
Խճողումի մէջ երեխան չի կրնար անմիջապէս ճանչնալ ճշակի մը կամ սուղոցի մը ձայնն ու ուղղութիւնը եւ չփոփի կրնայ մատնուիլ:

ՀԱՍԱԿԸ
Իր կարճ հասակին պատճառով երեխան չի կրնար հեռուն, ինքնաշարժներէն անդին տեսնել, վարորդները եւս կրնան չտեսնել զինք:



ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆԸ
Երեխային տեսողութեան դաշտը չափահասի մը տեսողութեան դաշտին չափ է, բայց երեխան առաւելաբար առջեւը կը տեսնէ եւ հագուադէպօրէն ալ կամ ձախ կը նայի, ինչ որ վտանգաւոր է:

ԿԵՑՈՒՄԸ
Երեխան յաճախ իր զգացումներով եւ ոչ խելով կ'առաջնորդուի: Դպրոցէն ուշացած երեխան մտահոգ իր ստանալիք յանդիմանութենէն կամ պատիժէն եւ կամ խանդավառ, որ դիմացի մայրիկն վրայ ընկերները զինք կը կանչեն, պիտի ցրուի եւ իր մտացիք վիճակին մէջ վտանգները նուազ պիտի տեսնէ:

ՎԵՑ ԿԱՐԵՒՈՐ ԿԵՏԵՐ
1.- Նախքան երեխան առանձին փողոց ձգելը՝ նախ չափահասի մը հետ ան բազմաթիւ անգամներ պէտք է նոյն ճամբան երթեակէ եւ իրեն ընկերակցող անձը մատնանշէ դժուար, վտանգաւոր կէտերը, ուր երեխան կրկնակիօրէն ուշադիր պէտք է ըլլայ:
Ապա դերերը պէտք է շրջուին եւ այս անգամ երեխան մատնանշէ իրեն տրուած ցուցմունքները:
Վերջապէս, հեռուէն հսկելով կարելի է առաջին փորձ մը կատարել եւ ձգել, որ երեխան առանձին երթայ:
2.- Երեխային բացատրել երթեակի լոյսերուն իմաստն ու կարեւորութիւնը:
3.- Եթէ երեխան դպրոցէն ուշացած է, առանձին չձգել, այլ՝ անոր ընկերանալ, որպէսզի անպարանքին մէջ ինքզինք չկորսնցնէ եւ արկածի չհանդիպի:
4.- Բացատրել մայրիկն վրայէն եւ անցորդներուն յատուկ զիծերու վրայէն քալելու անհրաժեշտութիւնը:
5.- Փողոցը խաղալար չէ, երեխային հարտօնել, որ գնդակ կամ ռաքէթ խաղայ հոն:
6.- Նոյնիսկ մայրիկ վրայէն քալելու ժամանակ երեխային թելադրել, որ զգուշանայ կառատուններէ դուրս եկող ինքնաշարժներէ կամ մայրիկն վրայէն անցնող շարժանիւններէ:

ՀՈԳԵՒՈՐ

ԴԱՄԱԼԵՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՇԱՐՔ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը ուրախութեամբ ունի յայտնելու, թէ վերսկսած է իր տարեկան հոգեւոր դասախօսական շարքերուն:

Նիւթերը պիտի աւանդուին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան հայրերուն կողմէ, եւ տեղի պիտի ունենան երեք օրերու վրայ տարածւած, կաթողիկոսարանէն ներս, Ամբիկաս:

1. Ղուկաս Աւետարանի սերտողութիւն, Երեք-շաբթի օրերը, առաւօտեան ժամը 10:30էն 12:00:

2. Պողոս առաքելի կորնթացիներուն ուղղուած նամակի սերտողութիւն, Չորեքշաբթի օրերը, երեկոյեան ժամը 8:00էն 9:30:

3. Զրիստոնէական բարոյագիտութիւն, Ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 8:00էն 9:30:

Սիրով կը հրաւիրուին բոլոր հետաքրքրուողները, ներկայ գտնուելու սոյն ձեռնարկին:

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ

ԱՂՏՈՏ ԼԱԹԵՐԸ

Լուսացուելէ առաջ մեր աղտոտ լաթերը կը պահենք յատուկ կողովներու կամ պարկերու մէջ, ապա, նայած իրենց տեսակին, զանոնք մասերու կը բաժնենք եւ կը փոխադրենք լուսացքի մեքենային մէջ:

Մինչեւ անոնց հոն հասնիլը, սակայն, կան տարրական առողջապահական օրէնքներ, որոնք պէտք է յարգուին եւ գործադրուին ամբողջ ընտանիքին առողջութեան համար:

- 1 -
Տան մէջ յաճախակիօրէն պէտք է լուալ լաթերը, քանի որ անոնց վրայ կուտակուած փոշին կամ գոյացած արատները, աւելի եւս կը տեղաւորուին եւ զանոնք մաքրելը ալ աւելի կը դժուարանայ:

Միջին հաշուով, տան մը մէջ շաքարեկան 2 - 5 անգամ լուսացք պէտք է ըլլայ, երբեմն նոյնիսկ՝ աւելի, եթէ ընտանիքը բազմանդամ է:

- 2 -
Աղտոտ լաթերը կարելի է հաւաքել՝
- Կտակէ խոշոր պարկերու մէջ:
- Ծղօտէ կողովներու մէջ (կեփարիչով օժտուած):

- Կերպրկալէ կողովներու մէջ:
- Խսիւրէ խորունկ տաշտերու մէջ:

- 3 -
Աղտոտ լաթերը պատահական ձեւով չենտեղ կողովին մէջ, ոչ ալ սպասել, որ կողովը յորդի, որպէսզի լուսացքի ձեռնարկէք:
Պարբերաբար լուսացքը աղտոտ լաթերու տոպրակը, կողովը կամ տաշտը:

- 4 -
Եթէ տան մէջ նորածին կայ, անոր ապրանքները այնքան մը փոքր կ'ըլլան, որ կրնան ընդհանուրին մէջ կորսուիլ: Հետեւաբար նախընտրելի է առանձին պարկ մը կամ կողով մը նախատեսել նորածինին աղտոտ լաթերուն համար:

- 5 -
Եթէ տան մէջ հիւանդ ունիք, անոր աղտոտ լաթերը մի՛ խառնէք մնացեալին լաթերուն, այլ անմիջապէս լուսացք եւ զօրաւոր արեւին տակ չորցուցէք:

- 6 -
Լուսացքէն առաջ, երբ լաթերու ընտրութիւն պիտի ընէք, պէտք է գուշաւոր բաժնի ճերմակէն, ներքնազգեստները անձեռոցներէն, բրդեղէնները բամբակեղէններէն եւ այլն:

- 7 -
Աղտոտ լաթերը յատուկ պատրաստութեան կը կարօտին նախքան մե-

քենային մէջ զետեղուիլը:
- Ստուգեցէք շապիկներուն եւ բաճկոններուն կոճակները. եթէ ապա, ամրացուցէք:
- Պարպեցէք տաքատներուն, շապիկներուն գրպանները:
- Ակրաֆները կոճկեցէք, բականները (ֆերմիլը) նոյնպէս:
- Զինք եւ բոլոր տեսակի տաքատները հակառակ կողմ դարձնել մեքենային մէջ դնելէ առաջ:
- Ստուգեցէք, որ շապիկներուն ծալուած թեւերը կրկին բացուին:

- 8 -
Որպէսզի աղտոտ լա-

ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔԸ

19րդ դարուն ֆրանսացի մը՝ Մ. Ժոլի, պատահամբ եւ արկածով կը գտնէ «չոր մաքրութեան» սկզբունքը: Ան իր անհարկութեան պատճառով սխալմամբ կը դարձնէ թերեպէն-թիւնի էսանսին 2ի2ը, եւ հեղուկը կը տարածուի հագուստի մը վրայ: Զարմացած ան կը նկատէ, որ հեղուկը, հագուստը փնցնելու փոխարէն, կ'անհետացնէ անոր վրայի արատները:

Ժոլի իր այս յայտնաբերումը կ'ուզէ օգտագործել եւ 1855ին Փարիզի մէջ կը բացայ «չոր մաքրութեան» առաջին խանութը:

Աւելի ուշ, 1897ին, գերմանացի մը կը յայտնաբերէ թերթաբոլորիւրը, որ շատ աւելի նուազ բոցով էր:

1918ին այս Եւրոպայի փոխարինուի թրիք-լորեթիլէնով, որ առաւելութիւնը ունի շնչառական գործարաններուն չվնասելու:

Թերը կողովին կամ տոպրակին մէջ քանի մը օր լաւ վիճակի մէջ պահուի, պէտք է ստուգէք, որ խոնակ կամ թաց լաթեր չդրուին անոնց մէջ: Այլապէս անախորժ հոտերու առիթ պիտի տաք: Աղտոտ լաթերը պէտք է որ օդ առնեն կամ տոպրակին բերանը, կամ կողովին կափարիչը բանալով: Բարեբախտաբար, շատ մը կերպրկալէ տաշտեր կամ կողովներ բացուածքներ ունին այս անպատեհութեան առաջը առնելու համար:

ԽՈՐԱԳԻՐ


ԲՐԻՆՁՈՎ ԵՒ ԱՌՔԱՏՈՅՈՎ ԱՂՑԱՆ



4 անգի համար անհրաժեշտ են.
- 3 գաւաթ երկար հատիկով խաշած բրինձ
- Կանաչ սոխ (կէս գաւաթ)՝ մանրուած
- Վարունգ (կէս գաւաթ)՝ մանրուած
- Ստեպլին մը՝ բարակ ու երկար ցլիկներու պէս մանրուած
- Կանաչ բակլայ (կէս գաւաթ)՝ նախապէս խաշած
- Երկու աւոքառ
- Զիթաիւր՝ 8 ապուրի դգալ
- Կիտրոնի հիւթ՝ 8 ապուրի դգալ
- Զերմակ քացախ՝ 4 ապուրի դգալ

ՍՆՆՂԱԳԻՏԱԿԱՆ

ՉՄԵՌՆԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՊՏՈՒՂՆԵՐ



Նարինջ, կրիֆոն, քլեմանթին, կիտրոն... Մէկը միւսէն համեղ, մէկը միւսէն օգտակար այս պտուղները պէտք է առատօրէն սպառել ձմրան, քանի որ անոնք կը զօրացնեն մեր մարմնին դիմադրականութիւնը եւ մեզ կը պաշտպանեն մասնաւորաբար կրիֆոն եւ հարթութիւն:

ԿՐԻՖՈՆԸ Չափազանց մարսողական այս պտուղը 24 ջերմութ կը պարունակէ իւրաքանչիւր 100 կրամի մէջ: Սէ. կենսասնութիւն հարուստ կէս կրիֆոնը կը հայթայթէ Սէ. կենսասնութի մեր օրական պահանջին երեք չորրորդը: Անիկա նաեւ հանքայիններով հարուստ պտուղ մըն է: Որքան ան վարդագոյն ըլլայ, այնքան աւելի պէթաքարոթէն կը պարունակէ: Վերջապէս, այս համեղ պտուղը ծարաւը կը յագեցնէ, կը կազդուրէ եւ մարսողութիւնը կը դիւրացնէ:

ՆԱՐԻՆՋԸ Բնաթելով հարուստ այս պտուղը 45 ջերմութ կը պարունակէ իւրաքանչիւր 100 կրամի մէջ: Անիկա աշխարհի մէջ ամէնէն աւելի սպառուած ունեցող պտուղն է, անոր իւրաքանչիւր 100 կրամը 50 ժիլիկրամ Սէ. կենսասնութ կը պարունակէ: Քարոթէնով հարուստ՝ ան նաեւ կը պարունակէ էօ. կենսասնութ եւ հանքային աղեր: Նարինջը, չնորհիւ իր բնաթելերուն, կը կանոնաւորէ աղիքներու գործունէութիւնը:

ՔԼԵՄԱՆԹԻՆԸ Կէթաքարոթէնով՝ եւ Սէ. կենսասնութիւնով հարուստ համեղ պտուղ մըն է: Ասոնց շնորհիւ անիկա կը զօրացնէ մեր մարմնին դիմադրականութիւնը եւ կը պաշտպանէ «ձմեռային» հիւանդութիւններէն: Քլեմանթինը կը պարունակէ նաեւ այլազան հանքայիններ՝ կիր, փոթասիոմ, մակնեգիոմ, երկաթ, եւ այլն:

Գիտէի՞ք, որ քլեմանթինը ստեղծած է հայր Քլեմանը, 20րդ դարու սկիզբը, մանտարին մը եւ նարինջ մը պատուաստելով:

ԿԻՏՐՈՆԸ Քիչ ջերմութ կը պարունակէ, իւրաքանչիւր 100 կրամը՝ 26 ջերմութ:
Կիտրոնը քիչ շաքար կը պարունակէ, անոր թթու համը պատճառ կը դառնայ, որ մնացեալ պտուղներուն նման զայն յաճախակիօրէն չուտենք: Կարելի է անոր հիւթը գործածել աղցաններու պատրաստութեան մէջ կամ ծովային կենդանիները համեմելու ժամանակ: Սէ. կենսասնութիւնով հարուստ կիտրոնը պէտք է քամել ու անմիջապէս խմել հիւթը, որ կը պարունակէ առատ կիր եւ փոթասիոմ:

- Մանանեխ (մուծարտ)՝ 1 թէյի դգալ
- Աղ, սեւ պղպեղ
- Պճեղ մը ճգմուած սխտոր
- Լոլիկ մը՝ զարդարանքի համար

Պատրաստութեան կերպը.
Խորունկ ամանի մը մէջ խառնել կիտրոնի հիւթը, ձիթաիւրը, աղը, սխտորը եւ քացախը:
Բաց, խորունկ ամանի մը մէջ խառնել բրինձը, ստեպլինը, բակլայն, վարունգը, սոխը եւ կտրտուած մէկ աւոքառոն:
Երեսը զարդարել երկրորդ աւոքառոյն շերտերով եւ կիտուած լոլիկի կտորներով:
Բոլորին վրայ թափել թացանը եւ հրամցնել:

Պատրաստեց՝
ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱՆԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅԻՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀԱՍՐԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՑԵՆ
HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

